ԿՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Դ· ՏԱՐԻ· 1863· ԹԻՒ Զ·

ՅՈՒՆԻՍ

ԳԻՋՕ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿՐՈՒԹԵԱՆ

ՈՐ

ՅԵՒՐՈՊԻԱ

ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐ *

Նիւթ դասուն.—Արդեան պատմութեան մէջ ընդհանուր իրերը պարզելու դժուարութիւնը.—ԺԶ. դարուայ Եւրոպիոյ նկարագիրը.—(Իրերն) շտապով ընդհանուր կամ հասարակաց անելու վտանգը.—Վերանորոգութեան տուուած այլեւայլ պատճառները.—Վերանորոգութեան դլխաւոր հոգին մարդկային հանճարոյն ազատամրութիւնն է ընդդէմ բացարձակ իշխանութեան մտաւորական կամ (հոգեւոր) կարդին մէջ.—Այս իրին ապացոյցները.—Վերանորոգութեան վիճակն այլեւայլ երկիրներումը.—Վերանորոգութեան սակայ կողմը.—Յիսուսեանք (Եէզուիթները).—Կրօնական (հոգեւոր) ընկերութեան եւ քաղաքական (մարմնաւոր) ընկերութեան յեղափոխութեանց իրեւանմանութիւնը:

Պարոնայք,

ՇԱՏ անգամ ցաւել ենք Եւրոպական ընկերութեան անկարգութեան եւ խառնիփուռնութեան համար եւ դանդատուել ենք էլ մի այնպիսի ցիրուցան, անմիաբան, անկապ եւ քակտուած ընկերութիւն ճանաչելու եւ նկարագրելու համար եղած դժուարութեան մասին: Համ-

* Տես նախընթաց դասերը Ա. Բ. Դ. տարուայ թուփումը:

բերութեամբ սպասեցինք ընդհանուր չահերուն, կարգաւորութեան եւ ընկերական միութեան ժամանակին։ Հասնում ենք այս ժամանակին, մանում ենք այն գարերու մէջ, երբ ամէն բան ամփոփուում բովանդակուում է ընդհանուր իրերու եւ ընդհանուր զաղափարներու մէջ. կարգաւորութեան եւ միութեան դարերումը։ Այս ժամանակին մէջ մի ուրիշ տեսակ դծուարութեան կպատահինք։ Մինչեւ հիմա շատ նեղութիւն կրեցինք իրերը միմիանց հետ կապելու, նրանք կարգի դնելու, իրանց մէջ հասարակ եղածն ըմբռնելու եւ նրանց միջից մի ամբողջութիւն դուրս հանելու համար։ Ընդ հակառակին, ամէն բան արդեան Եւրոպայ մէջ յար եւ կից է իրարու հետ. ընկերական կեանքի բոլոր տարերքներն եւ բոլոր դիպուածքները ձեւ եւ կերպարանք են առնում եւ փոփոխակի իրարու վրայ են ներգործում։ Մարդկանց իրար հետ ունեցած հաղորդութիւնները շատ աւելի յաճախ, շատ աւելի խառնաշփոթ են ընում, նոյնպէս նա եւ իրանց յարաբերութիւնները տէրութեան կառավարութեան հետ եւ տէրութեանց յարաբերութիւններն իրանց մէջ, ինչպէս նաեւ մարդկային հանճարոյն զաղափարներն ու աշխատանքները։

Այն ժամանակներումը, որոնց վրայով անցկացանք, բազմաթիւ իրեր ընում եւ կատարուում էին առանձնակի եւ առանց փոխադարձ ազդեցութեան։ Այսօր, էլ առանձնականութիւն չկայ, ամէն բան իրար զբաղչումեն եւ իրար զպչելիս իրար հետ են անցկենում, իրար են այլայլում։ Մի այսպիսի այլեւայլութեան մէջ ճշմարիտ միութիւն ըմբռնելու, այնչափ ընդարձակ եւ խառնիխուռն չարժման ուղղութիւնն որոշելու, իրար հետ պինդ կապուած այն այլեւայլ եւ անչափ տարերքներն ամփոփելու եւ վերջապէս էն դլխաւոր եւ ընդհանուր իրն նշանակելու պէս աւելի դժուարին բան չկայ, այն իրն, որու մէջ ամփոփուած են մի շատ իրեր, որնոր մի ժամանակի կերպարանքն է ցոյց տալի եւ որնոր քաղաքակրթութեան պատմութեան մէջ իրա ազդեցութեան եւ իր պաշտօնին բուն պատկերն է։

Հիմա պիտի չափենք մի հայեացքով այս դժուարութեան մեծութիւնը մեր այսօրուայ դրպելու մեծ դէպքին մէջ։

Ժբ. դարումը, մի դէպքի պատահեցանք, որնոր թէ որ բնութեամբ կրօնական չէր, բայց ծագմամբ կրօնական էր, կամենում եմ խաչակիրներու մասին ասել, հնայելով այն դէպքին մեծութեանը, երկարատեւութեանը եւ իրա յառաջ բերած դիպուածներու փոփոխութեանը, հեշտ եղաւ մեզ համար նրա ընդհանուր հոդին որոշելու եւ նրա միութիւնն ու ազդեցութիւնը բուսական հեշտութեամբ սահմանելու։ Այսօր մեր նկատման տակն ունինք ԺԶ. դարուայ կրօնական յեղափոխութիւնը, այն յեղափոխութիւնն, որուն առ հասարակ (Ռէֆորմ) վերանորոգութիւն կասեն։ Թող ներուի ինձ ասելու, որ (Ռէֆորմ) բառը պիտի գործածեմ իբրեւ մի պարզ եւ յարմար բառ եւ համանշան կրօնական յե-

վերանորոգութեան ընթացքը, թէեւ իր հետեւանքները զարգանալուց եւ ընդարձակուելուց չդադարեցաւ։

Անց կենանք հիմա չտապով այս ասպարիզի վրայով, եւ դէպքերն ու անցքերն անուանելուց ուրիշ բան չարած. ցոյց տանք այս ասպարիզումն եղածը։ Պիտի տեսնէք դուք, այս միակ տեղեկութեամբ, այսինքն անցքերու եւ դէպքերու անուանց ցամաք եւ անկոտոր բովանդակութենից թէ որչափ դժուարութիւն պէտք է լինի այնչափ փոփոխական եւ խառնիխուռն իրերը համառօտելը, այսինքն ամփոփելն եմ ասում, մի ընդհանուր իրողութեան մէջ, որոշելը ԺԶ. դարու կրօնական յեղափոխութեան ճշմարիտ կերպարանքը եւ նշանակելը նրա պաշտօնը մեր քաղաքակրթութեան պատմութեան մէջ։

Երբ վերանորոգութիւնը բացուեցաւ, մեծ ճգնաժամումը ըլլալով ընկաւ, Ֆրանսուա առաջնոյն եւ Կարոլոս հինգերորդին կռիւներում, Ֆրանսիոյ եւ Սպանիոյ մէջ։ Այս կռիւն եղաւ նախ Իտալիոյ տէր լինելու համար, յետոյ Գերմանիոյ կայսրութեան, ի վերջոյ Եւրոպիում առաւելակշռութիւն ունենալու համար։ Այս այն ժամանակն է, երբ Աւստրիոյ տունը մեծանում եւ տիրապետում է Եւրոպիում, այս այն ժամանակն է, երբ Անգլիան իր Հենրիկոս Ը. թագաւորովը աւելի կանոնաւոր եւ յարատեւ եւ ընդարձակ կերպով ցամաքային Եւրոպիոյ քաղաքականութեան մէջ միջամտութիւն է անում, որ մինչեւ այն ժամանակ չէր արել։

ԺԶ. դարն աչքի տակից անցկացնենք Ֆրանսիում։ Ֆրանսիան այս միջոցին Պրոտէստանտներու եւ Քաթոլիկներու կրօնական մեծ կռիւներուն է բռնուած, այս կռիւները միջոց եւ առիթ եղան մեծամեծ իշխաններու համար մի նոր փորձ եւ ջանք անելու իշխանութիւնը ձեռք բերելու, որոնք իրանց ձեռից ընկնում էր եւ թագաւորականութիւնն էր զօրանում։ Այս է մեր կրօնական պատերազմներու, եւ Վալուանների դէմ եղած Կիզերու նիզակակցութեան եւ կռիւներու քաղաքական նշանակութիւնը, որոնք Հենրիկոս Դ-ի գահակալութեամբը վերջացան։

Սպանիում Փիլիպպոս Բ-ի թագաւորութեան ժամանակ, Ստորին Նահանգներու յեղափոխութիւնը դուրս ընկաւ։ Հաւատաքննութիւնը եւ քաղաքական ու կրօնական ազատութիւնն իրար հետ կռուեցան, Ալբի դուքսի եւ Օրանժի իշխանի անուններով։ Մինչդեռ ազատութիւնն յաղթել էր Հոլլանդիում հաստատամտութեան եւ արդարամտութեան ուժով, ջնջուեցաւ Սպանիոյ մէջ, ուր տեղ աշխարհական եւ եկեղեցական բացարձակ իշխանութիւնը զօրացաւ։

Անգլիում, Մարիամ եւ Եղիսաբէթ թագուհիներուն տիրապետութիւնը բողոքականութեան դուխ Եղիսաբէթի կռիւն ընդդէմ Փիլիպպոս Բ-ի։ Յակոբ Ստուարդի Անգլիոյ գահը բարձրանալովը, որ սկիզբ եղաւ թագաւորականութեան եւ Անգլիական ժողովրդեան մէջ եղած մեծ կռիւներին։

մարդկային հանճարոյն ազատ ընթացքին վրայ։ Երկու մարդ քս դիմացը կգան, Բաղոն եւ Տէքարդ, որոնք արդեան աշխարհիս մէջ փիլիսոփայութեան ամենամեծ յեղափոխութեան հեղինակներն եղան եւ երկու դպրոցներու հիմանադիրք, նոյնպէս այս ժամանակն Իտալական զբրականութեան փառաւորութեան, Ֆրանսիական եւ Անգլիական գրականութեան սկզբնաւորութեան ժամանակն է։ Ի վերջոյ այս ժամանակս ամենամեծ զաղթականութեանց եւ վաճառականական գրութեան ամենազարգացման ժամանակն է։

Այսպէս, Պարոնայք, որ հայեցուածքով որ նկատելու լինիք այս ժամանակս, կտեսնէք որ քաղաքական, եկեղեցական, փիլիսոփայական եւ գրականական դէպքերն շատ աւելի բազմաթիւ, շատ աւելի փոփոխական եւ շատ աւելի կարեւոր են քան թէ նախընթաց դարերումը։ Մարդկային հանճարոյն ազդութիւնը ամէն կերպով յայտնւում է, մարդկանց իրար հետ ունեցած յարաբերութեանց մէջ, իրանց եւ իշխանութեան հետ ունեցած հաղորդակցութեանց մէջ, տէրութեանց մէջ եղած կապակցութեանց մէջ եւ բուն մտաւորական աշխատութեան մէջ, մի խօսքով մեծ մարդկանց եւ մեծ բաներու ժամանակն է։ Այս ժամանակիս մէջէ, եւ այն կրօնական յեղափոխութիւնն, որու վրայ է եւ մեր զբաղմունքը որոնք բոլոր դէպքերից ամենամեծն եւ այս ժամանակիս գլխաւոր իրն է եւ որուն իր անունն է տալի եւ նրա կերպարանքն է որոշում։ Այսչափ զօրաւոր իրերու մէջ, որոնք այնչափ մեծ խաղխաղացին, ամենազօրաւորն է վերանորոգութիւնը, որոյ մէջ բոլոր միւսներր ամփոփուեցան եւ ամենուն էլ ձեւ եւ ուղղութիւն տուաւ կամ թէ վերանորոգութիւնը ներանցից կերպարանք եւ ուղղութիւն ստացաւ։ Ուստի եւ մեր այսօրուայ ասելիքն պիտի լինի ճշմարտութեամբ նկարագրել, ճշգրտութեամբ համառօտրել այն դէպքն, որոնք բոլոր միւսներին վերայ գլխաւորն եղաւ այս ամենամեծ դէպքերու ժամանակումը, այն իրն որ բոլոր միւս իրերից շատ աւելի բան արաւ այս ամենամեծ իրերու ժամանակումը։

Հեշտութեամբ հասկանում էք, թէ ասուածն զժուարին լինելը այնքան այլեւայլ, այնքան անհամար եւ այնքան իրար հետ յարեւկից իրերը մի ճշմարիտ պատմական միութեան մէջ բովանդակելը։ Սակայն այս բանն անելը հարկաւոր է։ Երբ մի անգամ դէպքերը իրանց վերջին կհասնին, երբ մի անգամ պատմութիւն կլինին, այն բանն որ կարեւոր է, այն բանն որ մարդս կվնտռէ ընդհանուր իրերն է պատճառներու եւ գործքերու կարգն ու կապը։ Այս է պատմութեան անմահական բաժինը, որու վրայ մարդկանց բոլոր սերունդները պէտք ունին աչք դարձնելու, անցեալն իմանալու եւ իրանց էլ ճանաչելու։ Իրերը ընդհանուր կամ հասարակաց անելու հարկաւորութիւնը, ամէնից զօրաւոր եւ ամէնից փառաւոր մտաւորական հարկաւորութիւնն է, բայց

Ջերումը։ Այս դարու ընթացքում երկու մեծամեծ յեղափոխության կամ կրօնական վերանորոգության փորձ տեսանք. մինն էր Ժողովքներու ձեռքով օրինաւոր վերանորոգութիւն անելու փորձը, միւսն էլ Հուսեանց ձեռքով Բոհեմիում եղած յեղափոխական վերանորոգության փորձը, տեսանք որ որանց երկուսն էլ ընկան, բայց սակայն հասկացանք, որ այն դէպքը խեղդելն անկարելի էր եղել եւ թէ պէտք էր, որ նորունց յառաջ դար կամ այս եւ կամ այն կերպարանքով եւ թէ ինչ որ ԺԵ. դարը փորձ էր արել գլուխ բերելու ԺԶ. դարումն անպատճառ պիտի կատարէր։ Այս տեղ ամենեին ԺԶ. դարու կրօնական յեղափոխության մանրամասնը իրերը չեմ պատմել, կհամարեմ, որ ամէն մարդ գիտէ, այլ միայն մարդկային կեանքին վրայ արած ընդհանուր ազդեցության վրայ խօսելու կաշխատիմ։

Երբ այս մեծ դէպքին պատճառները քննուելու հարկ եղաւ, վերանորոգության թիւնամիք, քաղաքակրթության ընթացքին թշնամութիւնքն եւ պատահմունքերն եղան, ասացին. օրինակի համար նեղրոգութիւններ վաճառելը Դոմինիկեաններուն տուուած լինելը, որնոր Օգոստինեանց նախանձ է գրգռել, ուստի Լուտեր Օգոստինեան լինելով, այս բանս էլ առիթ էր եղել վերանորոգության։ Ամենք էլ իշխաններու փառասիրութիւնն էր, ասացին, պատճառը, որոնք ոսոխ լինելով եկեղեցական իշխանության, կամենում են եղել եկեղեցւոյն ստացուած քները յափշտակել։ Այսպէս կամք եղաւ շատերին մեկնել կրօնական յեղափոխությունը, իբրեւ թէ միմիայն մարդկանց վատ կողմը մարդկային գործքերը, մասնաւոր անձանց չահասիրութիւնը եւ անձնական կիրքերը լինէին։

Միւս կողմանէ, վերանորոգության կուսակիցներն ու բարեկամներն էլ ջանք արին այս յեղափոխության պատճառները մեկնել, ասելով թէ վերանորոգության հարկաւորութիւն կար, եկեղեցւոյն մէջ եղած յայտնի անկարգութիւնները ջնջելու, ցոյց տուին այնպէս իբրեւ թէ կրօնականների արած զրկանքների դէմ հատուցումն էր այս, կամ թէ մի մաքուր եկեղեցի կամ նախնական եկեղեցին վերստին հաստատելու դիտաւորութեամբ յղացած եւ գործադրուած էր. այս մեկնութեանց ոչ մինը եւ ոչ միւսը ինձ հիմնաւոր չի երեւում. երկրորդը առաջինից աւելի ճշմարտութիւն ունի, գէթ աւելի մեծ է եւ աւելի յարաբերութիւն ունի դէպքին մեծութեան եւ կարեւորութեան հետ, սակայն ես ճշգրիտ չեմ կարծում որ լինի։ Ըստ իմ կարծեաց, վերանորոգությունը ոչ մի դիպուած էր, այս ինքն բաղդի եւ անձնական չահասիրութեան հետեւանք եւ ոչ էլ կրօնական բարեկարգութիւն անելու հասարակ դիտաւորութիւն, այսինքն մարդկայնութեան եւ ճշմարտութեան մտացածին հետեւանքը։ Վերանորոգությունը սրանցից շատ աւելի զօրաւոր մի պատճառ ունեցաւ, որնոր բոլոր մասնաւոր պատճառներից մեծ է։ Վերանորոգությունը մարդկային

էլ իրան չէր պատկանում, այլ աշխարհականաց կառավարութեան ձեռին էր անցկացել, սակայն եկեղեցական իշխանութիւնը բոլոր իր պահանջմունքները, իր ահեղութիւնը եւ բոլոր իր արտաքին կարեւորութիւնը պահանջում էր։ Նրա դլխին այն հասաւ, ինչ որ հասել է շատ անդամ հին կառավարութեանց, նրա դէմ եղած դանդատներին մեծ մասն էլ հիմնաւոր չէին. ԺԶ. դարումը Հռովմայ արքունիքը խիստ բրոնաւոր եղած լինելը ճշմարիտ չէ, նոյնպէս եւ անկարգութիւնները այն քան շատ եւ յայտնի չէին, ինչպէս էին ուրիշ ժամանակներումը։ Ընդհակառակն երբէք եկեղեցական կառավարութիւնն այնքան թոյլ, այնքան ներողամիտ չէր եղել եւ աչք խփել ամէն բանի վրայ, միայն թէ իրա վրայ խնդիր չբաց ըլլէր, միայն թէ իրան ճանաչէին. և մինչեւ այն ժամանակ վայելած իրաւունքներն ընդունէին, թէ եւ անգործուն ըլլէին նրանք, հէրիք էր, որ իր ունեցած վիճակն ապահովացնէին եւ իրան հարկ տային։ Եկեղեցական կառավարութիւնը մարդկանց խելքը հանդիստ կթողուր, թէ որ մարդկանց խելքն էլ նրա նկատմամբ նոյնպէս անէր։ Բայց հէնց երբ կառավարութիւնները տկար են եւ երբ էլ վնաս չեն կարող անել այն ժամանակ ամէն կողմից հարուածներ իրանց դլխին կգան, վասն դի այն ժամանակ կարելի է յարձակիլ նրանց վրայ եւ յաղաջ չէր կարելի։

Ուրեմն այն ժամանակուայ մարդկային հանճարոյն եւ նրա կառավարութեան վիճակին քննողութեամբը, յայտնի է, որ վերանորոգութեան կերպարանքը պէտք էր լինել, կրկնում եմ, ազատութեան մի հեռանդն ու մարդկային հանճարոյն մի մեծ ապստամբութիւնը։ Այս է, տարակոյս մի ունենաք, այն դլխաւոր պատճառը, որ բոլոր միւսներին վրայ մեծ է, ու բարձր է ամէն չափերից, թէ տղկերու թէ իշխաններու եւ թէ նմանապէս բուն իսկ վերանորոգութեան հարկաւորութենից եւ այն ժամանակուայ կրօնաւորաց արած դրկանաց դէմ անելու դարմանից, որոնցից ամէն մարդ զանդատւում էր։

Համարեա թէ, վերանորոգութեան առաջին տարիները անցկենալուց, բոլոր իր պահանջմունքներն ի գործ դնելուց եւ բոլոր իր տրրտունջներն ասելուց յետոյ, համարեա թէ, յանկարծ եկեղեցական իշխանութիւնը համաձայնէր եւ ասէր, շատ լաւ, թող այդպէս լինի, ամէն բան վերանորոգում եմ, աւելի օրինաւոր եւ աւելի կրօնական կարդի եմ գալի, դուրս եմ դցում հարստահարութիւնները, կամովի իշխանութիւնը, եւ հարկահանութիւնը, մինչեւ անդամ հաւատոյ խնդիրներումը, կիսափոխեմ, կմեկնեմ, յետ կդնամ եւ նախնական ձեւը վեր կառնեմ, բայց բոլոր տրտունջներն այսպէս ուղղուելով, ես իմ վիճակն ու դրութիւնը կպահպանեմ, կլինիմ այնպէս, ինչպէս յաղաջ էի, մարդկային հանճարոյն կառավարութիւնը, մի եւ նոյն զօրութեամբ եւ մի եւ նոյն իրաւունքով։ Կարծէք թէ կրօնական յեղափոխութիւնը դոհ կըլլէր այս չափով եւ կանդ կառնէր իր ընթացքին մէջ։ Ես ամենեւին չեմ կարծում, ես հա-

ում, որ կարծես թէ իր դրութեամբը նպաստաւոր չէր կրօնական յեղափոխութեան ներգործութիւններն կրելու, եւ այս երկրումն ուր տեղ նուաճուեցաւ, այս տեղ անդամ մտաւորական անկախութեան եւ ազատութեան մի սկզբունք եղաւ։ Մինչեւ 1685 թիւը, այսինքն մինչեւ Նանթի հրովարտակի յետ առնելու ժամանակը՝ վերանորոգութիւնը Ֆրանսիում մի օրինաւոր կեանք ունեցաւ։ Այս երկար միջոցին մէջ զբրեց, վիճեց, ասեան կոչեց իր թշնամիները դրելու և իրա հետ վիճելու։ Այս միակ իրը, այս թերթերու բանակցութեան պատերազմը՝ հին եւ նոր դաղափարներու մէջ, Ֆրանսիում շատ աւելի մի իսկական եւ ներգործուն ազատութիւն յառաջ բերաւ, որնոր առ հասարակ չկարծուում, եւ որնոր գիտութեան, բարոյականութեան Ֆրանսիոյ կղերին պատուոյն օգտին նպաստաւոր եղաւ, ինչպէս նաեւ ընդհանրապէս մտածման համար։ Դիցեցէք ձեր աչքը, Պարոնայք, Բոսուէտայ Գլոտիոսի հետ ունեցած բանակցութեանց եւ այն ժամանակուայ բոլոր կրօնական վիճաբանութեանց վրայ եւ ձեզուձեզ հարցրէք, թէ Լուդովիկոս ԺԴ. երբէք համբերում կլինէր արդեօք մի որ եւ է ուրիշ ինդրոյ մասին այս աստիճան ազատութիւն։ Վերանորոգութեան եւ նրա հակառակ կողման մէջ էր որ շատ ազատութիւն կար Ֆրանսիում ԺԵ. դարումը։ Այն ժամանակում կրօնական հանճարն շատ աւելի համարձակ եւ աներկիւղ էր։ Կրօնական հանճարը շատ աւելի համարձակութեամբ խնդիրներու վրա յ խօսեց, քան թէ Ֆենելոնի քաղաքական հանճարը Տելիմաքի մէջ։ Այս վիճակը մինչեւ Նանթի հրովարտակի յետ առնուելը տեւեց, վասն դի 1685-ից մինչեւ ԺԵ. դարու մարդկային հանճարոյն դէպի դուրս պայթուելը քառասուն տարի չկար եւ կրօնական յեղափոխութեան ազդեցութիւնը ինդատ մտաւորական ազատութեան նոր էր դաղարում, երբ փիլիսոփայական յեղափոխութիւնը սկսում էր։

Տեսնում էք, Պարոնայք, ուր տեղ որ վերանորոգութիւնը մտել էր, ուր տեղ մի մեծ խաղ է դարձրել յաղթելով կամ յաղթուելով, ընդհանուր գլխաւոր եւ հաստատ հետեւանք ունեցաւ հանճարոյն գործունէութիւնը եւ ազատութեան անչափ յառաջադիմութիւնը դէպի մարդկային խելքի ազատութիւն։

Վերանորոգութիւնն ոչ թէ միայն այս հետեւանքն ունեցաւ, այլ սքրանով գոհ էլ եղաւ։ Այն տեղ, ուր որ այս հետեւանքը ձեռք բերաւ էլ ուրիշ բան վիճուելու ետեւից չընկաւ, վասն դի այս բանս էր իր գլխաւոր վիճուածն, իր սկզբնական եւ հիմնական հոգին եւ նպատակը Ուստի Գերմանիում քաղաքական ազատութիւն վիճուելու տեղ, ընդունեց, չեմ կամենում քաղաքական ստրկութիւնն ասել, այլ ազատութեան պակասութիւնը։ Ագլիում հաւան կացաւ եւ ընդունեց կղերական նուիրապետութեան սահմանադրութիւնը, Եկեղեցւոյ առաջնայնութիւնը, որնոր շատ աւելի անկարդ եւ կախեալ էր, քան թէ հռովմէական եկեղեցին

է հոգաւոր իշխանութեան կործանումը եւ կրօնական ընկերութեան իր ամբողջութենից քակտումը, Բ. բռնակալութիւնը եւ հալածանքը։ Դուք, ասացին, վերանորոգիչներին, դրդում դրդում էք ազատամտութիւնն եւ յառաջ էք բերում, բայց երբ նա երեւում է, դուք կամենում էք զսպել եւ նուաճել նրան։ Ինչպէս էք նուաճում նրան, ամենասաստիկ եւ ամենաբռնի միջոցներով։ Դուք էլ նմանապէս հերետիկոսութիւնը հալածում էք եւ այդ էլ ապօրինաւոր իշխանութեան զօրութեամբ»։ Վերանորոգութեան դէմ ուղղուած բոլոր մեծամեծ դրուածքներն աչքից անցկացրէք եւ մի կարճ քաղուած արէք նրանց միջից, բուն վարդապետական խնդիրը մի կողմ թողելով, կտեսնէք, որ նրանց բոլոր ասուածներն այս երկու հիմնական յանդիմանութեանց մէջ են ամփոփուում։

Վերանորոգուած կողմը շատ նեղն էր ընկնում, երբ նրան երեսին էին տալի աղանդների բազմանալը, փոխանակ խոստովանելու, փոխանակ պահպանելու իրան ազատ զարդացման օրինաւորութիւնը անիծում էր աղանդները, վշտանում նեղանում էր եւ ինքն իրան արդարացնում։ Երբ նրա իբրեւ հալածիչ մեղադրում էին, չփոթմամբ էր պաշտպանում իրան, հարկաւորութիւնն էր պատճառ բռնում, մոլորութիւնը նրուաճելու եւ պատժելու իրաւունք ունենք ասում էր, վասն զի ինքն էր ճշմարտութեան տէր, միայն իր հաւատքն իր օրէնքն էր օրինաւոր։ Թէ որ հռովմէական եկեղեցին իրաւունք չունէր վերանորոգուածները պատժելու, նրա համար էր որ նրանց դէմ յանցաւոր էր։ Երբ հալածանքի համար կշտամբում էին վերանորոգութեան մէջ տիրապետող կողմին, ոչ թէ իր թշնամիները, այլ իր բուն զաւակները։ Երբ այն աղանդները, որոնք այս տիրապետող կողմը նեղում էր, ասում էին «Մենք էլ ձեր արածն ենք անում, մենք էլ բաժանուում ենք ինչպէս դուք բաժանուեցաք», եւս աւելի վերանորոգուածները նեղն էին ընկնում պատասխանելու եւ շատ անգամ ուրիշ կերպով չէին պատասխանում, այլ բռնութիւնն ու զօրութիւնը կրկնելով։

Նրա համար, որ իրօք հոգեւորական կարգին մէջ բացարձակ իշխանութիւնը կործանելու աշխատելիս ԺԶ. դարուայ կրօնական յեղափոխութիւնը մտաւոր եւ հոգեկան ազատութեան ճմարիտ սկզբունքները չճանաչեց։ Մարդկային հանճարն էր ազատում իշխանութենից ու ինքն էր պահանջում օրէնքներու զօրութեամբ նրան կառավարել, իրօք ազատ քննողութիւն զօրացնում էր, սկզբունքով նա կարծում էր որ մի ապօրինաւոր իշխանութեան տեղ, մի օրինաւոր իշխանութիւն էր հաստատում։ Երբէք նա իր գործքին առաջին պատճառին չէր բարձրացել, նոյնպէս էլ երբէք մինչեւ վերջին հետեւանքին չէր իջել։ Ուստի կրկին սխալանքի մէջ ընկաւ, մին կողմանէ, ոչ ճանաչեց եւ ոչ յարգեց մարդկային մտաց ամէն իրաւունքները, երբ ինքն իրա առանձին հաշուին համար այդ իրաւունքները պահանջում էր, ուրիշ տեղ ուրիշների նկատ-

տարեցին, զօրաւոր բանակներ շարժման մէջ դրին, այլ սանդարամետական խաւարային, դաժան եւ ցածր ճանապարհներով շարժ ելան, այնպիսի ճանապահներով, որ բնաւ երեւակայութիւն չէր յարիչակում եւ իրանց այն չանն ու օգուտը չէր տալի, որնոր մեծամեծ իրերու հետ կից է որ եւ իցէ սկզբունքով եւ նպատակով որ լինի։

Ընդ հակառակն, այն կողմն որու դէմ կռուում էին Ցիսուսեանք, ոչ թէ միայն յաղթեց, այլ փառաւորութեամբ յաղթեց, ու մեծամեծ բաներ արաւ մեծամեծ միջոցներով, ազգեր ոտի վրայ կանգնեցուց, Եւրոպիան մեծ մարդիկներով սփռեց, տէրութեանց ձեւն ու վիճակն արեւելեան տակ փոփոխեց։ Ամէն բան, մի խօսքով, Ցիսուսեանց հակառակն եղաւ, թէ յաջողութիւնը եւ թէ արտաքին երեւոյթը։ Սակայն շատ ստոյգ է, որ Ցիսուսեանք մեծութիւն ունեցան, իրանց անուան, իրանց ազդեցութեան եւ իրանց պատմութեան հետ կապուած է եւ մի մեծ խորհուրդ, նրա համար, որ քաջ դիտէին ինչ են անում, ինչ են կամենում, նրա համար, որ կատարելապէս ճանաչողութիւն ունէին այն սկզբունքների վրայ, որոնց համաձայն ներդործում էին եւ այն նպատակի որու մասին դիմում էին, այսինքն հանճարի և կամեցողութեան կողմանէ մեծութիւն ունեցան, այս բանս իրանցն ազատեց ծաղրալի լինելուց, ինչպէս որ առ հասարակ ծաղրալի կլինին նրանք, որ իրանց բանը ձախորդ կը-գնայ։ Ընդհակառակն այն կողմը, ուր տեղ դէպքն աւելի մեծ եղաւ խորհրդից, այն կողմը, ուր տեղ երեւում է գործողութեան առաջին սկզբունքներին եւ վերջին հետեւանքներին ճանաչողութեան պակասութիւնը, մի թերակատար, իրար հակառակ, սահմանափակ բան մնաց, որ նոր յաղթողներին անդամ մի բանաւորական ստորնութեան մէջ դրաւ, որուն ազդեցութիւնը երբեմն դէպքերու մէջ զգալի եղաւ։ Այս է, կարծեմ, հին հոգեւոր կարգին, նոր հոգեւոր կարգին դէմ արած պատերազմին մէջ, վերանորոգութեան տակ կողմը. եւ այս բանս շատ անգամ նեղը դցեց իր դրութիւնը եւ արդելք եղաւ իրան պաշտպանելու, այնպէս օրինաւոր կերպով, ինչպէս որ իրաւունքն ունէր։

Կարող էի, Պարոնայք, ձեզ հետ ԺԶ. դարու կրօնական յեղափոխութիւնն ուրիշ շատ կերպարանքներու տակով նկատել, ոչինչ ասայի եւ ոչ ինչ էլ ասելիք չունիմ նրա բուն վարդապետութեան, նրա բուն կրօնին մէջ արածի մասին եւ մարդկային հոգւոյն, Աստուծոյ եւ յաւիտենականութեան հետ ունեցած յարաբերութեանց մասին։ Բայց կարող էի ցոյց տալ ձեզ ընկերական կարգին հետ ունեցած յարաբերութեանց փոփոխութեան մէջ ամէն տեղ իր անչափ կարեւորութեամբ յառաջ բերած հետեւանքները. օրինակի համար, կրօնական յեղափոխութիւնը կրօնը աշխարհականաց եւ հաւատացելոց մէջ մտցրուց, մինչեւ այն ժամանակ կրօնը կղերին, եկեղեցական կարգին առանձին ստացուած քն ը, ինքն էր նրա պտուղներից բաշխողը, բայց բուն արմատն իր մասն

կան ձեւից դուրս է դալի, բացարձակ միապետականութեան մէջ մընելու համար։ Այս այն ժամանակն է երբ Հռովմայ արքունիքը ժողովքներու եւ Եւրոպական աղնուապետութեան վրայ յաղթութիւնը տանում է։ Մի եւ նոյն յեղափոխութիւնը կատարում է քաղաքային ընկերութեան մէջ նմանապէս աղնուապետական իշխանութեան կործանուելովը, եւ թագաւորականութիւնը զօրանալով Եւրոպիոյ աշխարհին տէր է ընում։ ԺԶ. դարումը կրօնական ընկերութեան ծայումը մի ապստամբութիւն է լոյս ընկնում ընդդէմ միապետական դրութեան, ընդդէմ բացարձակ իշխանութեան հոգեւոր կարգին մէջ, այս յեղափոխութիւնը քերում է եւ հաստատում Եւրոպիոյ մէջ ազատ քննողութիւնը։ Մեր օրերումն էլ տեսանք քաղաքային կարգին մէջ մի եւ նոյն դէպքը, աշխարհական բացարձակ իշխանութիւնը նմանապէս յարձակումներ է կըրում եւ յաղթուում, տեսնում էք, երկու ընկերութիւնները նոյն եւ մի փոփոխութիւններից են անց կենում, նոյն եւ մի յեղափոխութեանց են ենթարկուում, միայն կրօնական ընկերութիւնը միշտ առաջ է ընում այս ասպարիզին մէջ։

Ահա Պարոնայք, արդեան ընկերութեան մի ամենամեծ իրը մեր ձեռին բերինք, այն է ազատ քննողութիւնը եւ մարդկային հանճարոյն ազատութիւնը. մի եւ նոյն ժամանակումը տեսնում ենք, որ գրեթէ ամէն տեղ քաղաքական կենդրոնաւորութիւնը զօրանում է, իմ յետագայ դասում մէջ Անդղիոյ յեղափոխութեան վրայ կխօսիմ, այսինքն այն դէպքի մասին, որում մէջ ազատ քննողութիւնն ու զուտ միապետութիւնը, որոնք երկուսն էլ քաղաքակրթութեան յառաջադիմութեան հետեւանքներն են եղել, առաջի անգամուն իրարու դէմեն հանդէս դուրս գալի։

Թարգմանութիւն
Մարկոսի Աղաբէգեան։

կիրս Ռուսստայ. ի գաւառս Ազովու, որ կոչի Ռաստով. յորում քաղաք շինեալ անուանեցաք Նախիջևան. ըստ անուան քաղաքամերն աշխարհի. և ի վերոգրեալ ժառանգորդացն կայսերական մեծութեանց, մեծ իշխան Պաւլ Պետրովիչին և նորին զուգակից մեծ դշխոյ Մարիա Ֆեոդորովնին և զաւակաց նոցա մեծ իշխան Ալէքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլովիչին և մեծ դշխոյ Ալէքսանդր Պաւլովնային, և ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի տեառն Ղուկաս սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց : Զեռամբ սուրբ աթոռոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակ Ռուսստայ երկրի Հայոց առաջնորդ, և նոր քաղաքիս Նախիջևանու հիմնադիր՝ ի Քրիստոս հանգուցեալ Սիմէօն կաթուղիկոսի աշակերտ և Սանահնեցի երկայնաբազուկ Արղութեանց Զումենց իշխան Շիօշքեդի որդի Յոսէփ արքեպիսկոպոս մեղապարտի. որ օծի զհիմունս քաղաքիս և եդի ի չորս կողմն սորին. և զհիմն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյս, եդի ի չորս անկիւնս սորին, երեք երեք քար, յանուն երկոտասան առաքելոցն Քրիստոսի. և ի ներքոյ սեղանոյն եդի զքարն օծեալ. յանուն Փրկչին. ընդ նմին եդի և զքաղաքամասունս սրբոյ. բայց անյայտս. վասն զի ի դալն ժողովրդեան մերոյ ի Սամար և ի Կատարինէսլաւ բնակութիւնսն, անդ այրեցեալ էր բոլոր զգեստն և անօթն Ղարասու կոչեցեալ քաղաքին. ուստի արծաթեայ պահարանք սրբոյ մասանց, հալեցեալք էին, և նշխարքն սրբոյն, ամբողջ մնացեալ, սակայն մեզ անյայտ, բարեբաղդ համարեցաք աստ ամփոփելն : Ընդ սմին օծաք և զհիմունս վանիցն, որ յանուն Փրկչին և սուրբ խաչին. առ յատակն հանդիպողքդ. յիշեցէ՛ք զմեզ ծնողաք մերովք :

Ընդ նմին արկաք և զհիմն Փրկիչ վանիցն. զոր մեր յաջորդ Գանձեցի Սիմէօն վարդապետն իւրով կայիւքն էառ զտեղին նորա ի Մարտինէն Թորոսեան, յաղագս վայելչութեան տեղւոյն, և ականակիտ յորդ աղբերացն, որք անդ բղխին : Անդ ժողովեցաք և զամենայն անասունս մեր և կարգեցաք վերակացուս :

Ի 1786 Յունիսի 21.

Ի սուրբ Լուսաւորչու բարեկենդան կիւրակէ ին, վերոյ Փոր-

տեսակ մեր զամենայն և կրկին դարձեալ ի Ցաղմէջերթ. Նոյեմբերի 3 ելաք անտի. զգալի եղև մեզ յոյժ, տեսանելն զաւերութիւն քաղաքաց՝ եկեղեցեաց և վանորէիցն մերոց. դարձաք անտի լի տրտմութեամբ ի Նախիջևան ի Նոյեմբերի 24 քաղաքն ամենայն ընդ յառաջ ելին դրօշակօքն արհեստաւորաց և ամենայն պատրաստութեամբ. և մեծաւ փառաւորութեամբ ընկալան զմեզ ի ներս, հանդերձ հոգևորական հանդիսիւ :

Ի 1788 փետրվարի 2. Ստամպօլցի Թադդէոս վարդապետն Մարաւագեան, առաքեցի ի Պետրպօլիք ի գնումն տպարանին հանգուցեալ Խաչերեանց Գրիգոր Խոջամալօվին, որում տուեալ ԺԲ. հազար ռուպլի, գնեալ էր ի Սակիմեր. որ էր ինն տեսակ հայագիր և երկու տեսակ Ռուսի և բազում պատկերք : Ի գին որոյ՝ որչափ ունէաք և կամ ժողովել կարացաք ի ժողովրդէնէն, ետուք. մնացելոյն՝ վէքսիլ ետուք մեր Նախիջևանու մելստարթիւն Աղայ Յովհաննէսին. և նա հատուցեալ էր կնոջն Խաչերով Գրիգորի՝ Կատարինէ զանարոմին. որով անդ տպեալ զԸնդհանրականն. զկնի խաղացուցեալ անտի՝ բերաք ի Նախիջևան. և հաստատեցաք ի սուրբ Խաչ վանքն մեր. որոյ հաստատակութիւնն ի Տեառնէ եղեցի միշտ, ամէն :

Ի սոյն թուոջ՝ փետրվարի 6. ելեալ ի Նախիջևանու գընացաք ի վերայ կովկասու լինէին ի Մոզդօկ՝ ի Ղզլար՝ և ի Հաշտարխան. ի տեսութիւն վիճակիս. անտի՝ զԱւետիս վարդապետն մեր և զԳրիգոր սարկաւագն ամենայն զգեստիւք սրբոյ Աթոռոյն, առ նոյն սուրբ գահն ուղևորեցաք, և մեք երկար հիւանդութիւն կրեալ ի Հաշտարխան, երից մեծամեծ հիւանդութեանց հանդիպելով. մինչև յայժմ, զնոյն ցաւսն կրեմ ողորմելի կենօք :

Ի սոյն թուոջ՝ մինչ մեք ելանել կամէաք ի Հաշտարխանու և գնալ ի Նախիջևան, Զուղայեցի Եղիազար Աղայի որդի պոլկովնիկ դերաղնիւ Աղայ Յովհաննէսն, ամենայն տամբն իւրով եկեալ ի Սարաֆայ գիւղն մերձ Հաշտարխանու. գնացաք և մեք անդ, անտի՝ ի միասին եկեալ եղաք ի Հաշտարխան ի Սեպտեմբեր 8. մնացաք անդ մինչև ի Դեկտեմբերի 6. և գնացաք անտի ի Պետրպօլիք :

մեծ պատրաստութիւնս. եկն մեծ յաղթանակող պայծառափայլն հանդիսիւ՝ յամրոցն. ընդ յառաջ եկեալ եպիսկոպոսին խաչիւք և պատշաճաւոր ասութեամբ՝ օրհնեաց զօրհնեցեալն յԱստուծոյ և գնովաւ զօրացեալն, և ընկալաւ համբուրիւ խաչին: Որոյ մտեալ ի գլուխն, հրամայեաց ամենայն թուրքաց և այլոց ելանել անտի մինչև ի 15 օրն և գնալ, որև եղաւ այնպէս:

Ի սոյն ամսոյ 8, Պայծառափայլ քնեալն, յանձնեաց մեզ զժողովուրդսն գրով ի հովութիւն. ընդ նոսին և զմզկիթն՝ աղայ Ջամնի կոչեցեալ, ետ ի սրբել, և տաճար կազմել Տեառն Աստուծոյ և բնակարան հրեշտակաց և մարդկանց:

Ի սոյն ամսոյ 9, զմզկիթն՝ Սուլթան Ջամնի կոչեցեալ, Ռուսքն առեալ օծեցին յանուն Ամենասուրբ Երրորդութեանն:

Ի սոյն ամսոյ 10, ի Տօնի Հրեշտակապետացն՝ ժամ արարեալ զմզկիթն աղայ Ջամնի կոչեցեալ, օծաք փառաւոր հանդիսիւ, ներկայութեամբ Ամբրոսիէ Արք եպիսկոպոսին և ամենայն բազմութեան. և ի յօծութեան աւուր ասացեալ քարոզն մեր, տարեալ մատուցաք Պայծառափայլին. յետ այսր ամենայնի, պայծառափայլն գնաց ի յեաշ. իսկ մեր մնացեալ ի Բէնդեր քաղաքն սկսաք ժողովել զցրուեալ և զգերեցեալ խղճալի ազգս մեր և վասն նոցա ամենիցն, առաք զտուն և զտեղի բնակութեան, շուրջ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցեաւն մերով. նոյնպէս վասն եկեղեցւոյն և վասն մեր, առաք զբազում տունս և զպանդոկս՝ գկրպակս և զարճանոցս, զփուռնս և բազանիսն. զորս ետուք ի վարձու և յետ հանդուցանելոյն՝ զժողովուրդսն մեր ի ծանր և ի տաժանելի ի վշտաց և ինեղութեանց, և անօրինելոյն մեր զամենայն ըստ պատշաճին, աղա՝ գնացաք անտի ցեաշ. Նոյեմբերի ի 30:

Ի սոյն թուոջ՝ Դեկտեմբեր ամսոյ ի 29, ի Տօնի Որդւոցն սրոտման. ըստ հրամանի պայծառափայլին՝ ժամ արարաք. եկն ի տես Սրբազան Արք եպիսկոպոսն Ամբրոսիէ ընդ բազում նախարարաց, զկնի պատարագին՝ ասացաք զպատշաճաւոր քարոզս, որոյ թարգմանութիւնն մատուցաք նմա. ընկալեալ՝ շնորհակալեցաւ յոյժ, ընդ այս խնդացին ազգ մեր.

խաչիկ և այլք ընդ յառաջ ելին ամենայն պատրաստութեամբ։

Մարտ ամսոյ ի 3, էհաս ի Ռոման բօթալի համբաւ մահուն Յովսէփայ կայսերն, որ սիրէր զազգս մեր. ժամ արարաք մեք, ըստ որում կարգաւոր չունէին, եկին ամենայն նախարարքն Գերմանիոյ. և զկնի պատարագին, լալով զքարոզ ինչ ասացաք ըստ պատշաճին. յետ այնորիկ՝ պաշաոն արարաք. որ եղև լաց և կոծ մեզ և Գերմանացւոցն՝ յոյժ. քարոզն ետուք կուսիսարին, նա առաքեալ էր ի Զէրնովկի գուբեռն. որք եղեալ էին ի կողէթ Ֆրանսիզաց զամենայն արարողութիւնս մեր։

Ի սոյն ամսոյ 8, պատրին նոցա՝ եկեալ ի Ռոման. հանդէս արարին և զմեզ հրաւիրեցին ի պատարագն. ընկալան մեծ պատուով. եդին յաթոռ և ձգեցին զեպալիչայ ի ներքոյ ոտից մերոյ. յետ աւարտման պատարագին և պաշաոնին, եկին ի համբոյր աջոյն մերոյ։ Եւ անտի ելեալ ի նոյն ամսոյ 18 դընացաք ի Յեաշ քաղաքն։

Մայիսի 2, հիւանդացաք մինչև ի մահ. քնեալն՝ թէպէտ զբաղում բժիշկս առաքեաց, սակայն՝ յատկապէս տօխտուր Յակօբ Եաղուլիչ Ռէինգսն օգնեաց մեզ. հաղիւ թէ՝ ի Յունիսի 25 առողջացաք. և գնացեալ ի գիւղն փօքսուտակ առքնեալն, ընդ մեզ եղեալ դէֆուդաթցց աղագաւ՝ առեալ զաստիճան, ուղևորեցաք անտի ի Նախիջևան Յունիսի 25 բազում յուսով. և մեք հրաման խնդրեալ գնացաք կրկին ի Սչովայ և ի փօթիշան, վասն ջրփոխութեան. Վարդավառն՝ ի Սրչով կատարեալ դարձաք անդրէն ի փօթիշան և ի Յեաշ։

Օգոստոսի 12, ի Յեաշ քաղաքէն՝ եկաք ի Բէնդէր, և ի սոյն ամսոյ 29, նաւքն մեր՝ խորտակեցին զնաւս Թուրքաց ի վերայ Սև Ծովուն. ասացաք առ այն քարոզ և մատուցաք քնեալին. նաև՝ Հաշտարխանցիք խնդրեալ էին վասն ինքեանց պրվէլէք. և վասն այնմ ծանուցաք քնեալին։

Սեպտեմբերի 20, ընկալաք գիր ի Հնդկաց ժողովրդենէն. և զայն ամենայն յուցաք քնեալին, և խնդրեցաք հասարակ պրվելէկ. հրամայեաց պատրաստել։

Սեպտեմբեր 29, օծաք զպատկեր Սուրբ Լուսաւորչին, և ի 30-ին մատուցաք իւրն. որ էր տօն նորա. մեծ փառաւորու-

ուտելիք տնանկաց բաշխէաք. և ըստ հրամանի ցեռան ըստ մերս կարի, զմերս ի մէջ հանեալ փութացաք ծածկել զմերկութիւնսն, տալով նոցա զայնս. և ըստ հրամանի քնեալին՝ և նորին յանձնարարական թղթոյն՝ ետուն մեզ զմեծ պատիւ և ցուցին զամբաւ մարդասիրութիւնս անդանօր գտանելեալ մեծամեծքն

Ի Նոյեմբեր ամսոյ 2, ի ցօնի Բարաղամու Անտիոքա հայրապետին, յաւուր շաբաթու, հանեալ ի Գիլու զաղգս մեր, ուղեւորեցաք ի Բէնդէր. որք էին տունք 116, ոգիք՝ 668. և բնակեցուցաք զնոսա անդ :

Ի Դեկտեմբեր ամսոյ 11, Գրաֆ Ալէքսանդրովիչ Սուվորովն ի չորեքշաբաթի աւուրն, ի լուսանալ առաւօտու հինգերորդ ժամուն, մարտ եդեալ մինչև տասն և մէկերորդ ժամն բազում արիւնահեղութեամբ և մեծ կոտորուածքով էառ զԻսմայէլ քաղաքն և կոտորեալ ի սուր սուսերի մաշեաց զբոլոր թուրքսն, ի մեծաց մինչև ցփոքունսն, աւելի քան զ21000 անձինս և գերեաց 8000 ոգիս. զորք նոցին կողոպտեցին զբոլոր անօթսն քրիստոնէից եկեղեցեաց և սպանին յաղգէ մերմէ 60 անձինս. զոմանս ևս գերեցին, զբոս հանաք մեք և ազատեցաք. զբազում գաղեալ իրս գտին և աւար առին. մերքն ճնացին խսպառ ամայի և խեղճ, որոց Աստուած հասցէ յոդնութիւն :

Ի սոյն ամսոյ 13, հրամանաւ Պայծառափայլին ի վերայ յուշու մեծ հիւանդութեամբ գնացաք Յիսմայէլ ընդ կապետ վարդապետին մերոյ և ընդ մերայնոցն, և ի 23 սոյն ամսոյ՝ մտաք ի քաղաքն Իսմայէլ :

Ի սոյն ամսոյ 25, մտեալ մեր Յիսմայէլ յետ 12 աւուր առման քաղաքին, և գտաք զժողովուրդս մեր հարուածեալք և նեղեալք ի սովու, սփոփեալ զնոսա ըստ կարի մերում, ապրարաք զողորմութիւն և պատեալ զվէրս նոցա, դարձաք ի ցեաշ մեծաւ աղէտիւ և կսկծեալք սրտիւ, լալով և բաղում կոծով. այնպէս էին մերկացուցեալ զեկեղեցիսն, որ ոչ գոյր զդեստ պատարագելոյ և կտոր ինչ ճնացեալ յեկեղեցական զարդուց և որպէս և իցէ, արարաք զպատառոտի զդեստս, մինչև ի քանի աւուրսն կառավարութեան. Տունք էին 322, յանձինք՝ 1650:

այլ ինն անտանելի անյաջող դիպուածք, սուգ, կսկիծ՝ հեծութիւն և մորմոքումն աղեաց. քանզի՝ միակ որդին՝ գերապնիւ Աղայ Յովհաննէսին Եղիազարեան՝ Աղայ Յարութիւն մարդասէր և ազգասէր ոգին, զծագկեալ կեանն իւր թառամեցուցեալ ըստ վճռոյ Արարչին, և ըստ անբաղդութեան վիճակի, ի հող խոնարհեալ էր ի Յունվարի 12, ուստի՝ ամսոյս 9. յԱնառակի կիւրակէին. Աղայ Յովհաննէսն հիւանդ գոլով միայն մայրն հանգուցելոյն՝ համեստութեամբ զարդարեալ պարեպաշտ խաթունն Աշնուուհի կատարինէ Իվանովնէն՝ եկեալ էր ի ժամ, ասացաք զքանս մխիթարականս. այնքան զգալի եղև ինձ ասողիս և լսողացն՝ և խղճալի ծնողին, մինչ զի՝ ոչ ես զասացեալս կարացի ըստ կարգի ի գլուխս տանիլ. և ոչ լսողքն ի լուելոյ հանդուրժել, այլ առ հասարակ զոռումն և զոչումն եղև ի մէջ եկեղեցւոյն. և զկնի սակաւ առ սակաւ՝ սկսաք մխիթարել. և զանբուժելի ցաւս սրտից նոցա՝ քրիստոնէական սուրբ հաւատովն բժշկել, և զայցելութիւն հոգւոյ հանգուցելոյն՝ ի Տեառնէ խնդրել. կացեալ մեր ի Պետրպոլ երբև ամիս հինգ, զանազան հիւանդութեամբ և հոգւոք, հիմնարկի զսուրբ Յարութեան եկեղեցին՝ ի հանդստարանի, ուր հանգուցանելոյ են զԱղայ Յարութիւն որդին Աղայ Յովհաննէսի:

Ի Յուլիսի 25, Պայծառափայլն ըստ հրամանի թագուհւոյն յետս դարձաւ ի Յեռաշ առ զօրսն, վասն հաշտութիւն խօսելոյ. ուստի՝ բանն մեր անդէն մնաց անկատար. Աղնիւ Աղայ Յովհաննէսիւն հրամայեալ էր մեզ, որ թարց մոմանաց ելեալ ի Յեռաշ գնասցուք. որ երբ յետ հաշտութեանն, կատարէլոց է զամենայն խնդիրս մեր:

Ի Օգոստոս ամսոյ 5, Վասիլ Ստեփանիչ Պօպովն եւ մեզ հաղար ռուպլի ճանապարհի թոշակ, ըստ խնդրոյ մերոյ. և մեր առեալ զայն և ի նոյն օր յուղի անկեալ գնացաք ի Մոսկով ի Սոյն ամսոյ 9:

Ի սոյն ամսոյ 10, հանդիպեցաք Սրբազան Պլատոն մետրապոլտին. սիրով ընկալաւ զմեզ յոյժ: Ասէին թողումն ըզմեծ մարդասիրութեամբ ընկալնուլն զմեզ, թէ երու եպիսկոպոսի Աբրիմանդրիտի, ի տան Սրբազան Տիխին եպիսկոպոսին իւրոյ. որ վասն մեր, նոյն Սրբազան Տիխինն՝ զյանձնա-

անդորը մնացին ի ձեռաց այլազգեաց և մի կարասցեն զնոսա նեղել. և նա՝ ուր, որչափ լինիլն ժողովրդեան մերոյ, դրեալ էր մեզ. զորս մեք կրկին գրով ետուք Վասիլ Սուրփանիչ Պոպովին. ընդ նմին և վասն մեր խնդիր ետուք սոյն պոպովին, իբր մեր ուղղիչն՝ ոչ է մեզ բաւական. օգնեսցէ մեզ պայծառափայլն, որպէս օգնէ այլ եպիսկոպոսացն: Ի սոյն միջոցի՝ եկին ի Թուրքաց Ռէիս Աֆանդին, օրտու Ղասսին և այլք, վասն հաշտութեան խօսելոյ. մեծաւ հանդիսիւ ընկալան զնոսա, կարգաւորեաց քնեազն զՍամուէլով և զբիպին ենարալն և զԼաշկարովն՝ խօսիլ ընդ նոսա: Մինչ սոքա խօսէին վասն զանազան դաշնադրութեանց, և մեք հեռեէաք զժողովուրդն հանել. և վասն նոցա օգնութիւն դատանել. և զքանի սուրհանդակս՝ ըստ հրամանի քնեազին և Լաշկարովի հրամանագրովն՝ ի զանազան քաղաքսն առաքէաք, ծանրացաւ հիւանդութիւն պայծառափայլին, այնքան մինչ զի՝ ըստ յորդորելոյ ոմանց, հաճեցաւ նոյն հիւանդութեամբն՝ գնալ ի Նիկոլայ քաղաքն, վասն ջրփոխութեան:

Ի Հոկտեմբեր ամսոյ 4. յաւուր շաբաթու ելեալ ի ցեաշու. գնաց, մինչև 37 վերստ:

Ի սոյն ամսոյ 5. յաւուր կիւրակէի, աւանդեաց զՀոգին իւր առ Աստուած, ԾԲ. ամի կենաց իւրոց. և ոչ թէ զմեզ միայն, այլ զբոլոր զօրս Ռուսաց, եթող կաթոկին զհետ իւր իակ մեք կորուսաք անդին խնամակալն մեր, և զյաստուկ բարերարն. այժմ՝ ձեռն ի ծնօտի, նստեալ կամք մերային ազդօքն ունելով վերին օգնականութեանն և այցելութեանն Աստուծոյ: Իսի զդի հանգուցելոյն՝ զարդարեալ մեծահանդէս արարողութեամբ, և բաղում դովասանական թղթովք պատրաստեալ, սպասին հրամանի թագուհւոյն. նոյնպէս և զդագաղն ոսկեհուռն զարդարեալ պճնեցուցին. ի վերայ նորա. ամպ հովն ի. և ի գլուխ դագաղին՝ թագն ականակուռ իշխանական. շուրջ զդագաղաւն՝ նշանքն և կավալէրքն. և ի փողոցս երկու վերստաչափ երկ կարգ դասք զին. որոց, ամենայն զարդուք և փողովք. հոգևորական պաշտօնեայքն առաջի, և ամենայն իւրովքն սեւազգեստք՝ յետոյ, այսպիսի արարողութեամբ՝ տարեալ հանգուցին ի Դօլի մանաստիրն ի սոյն ամ-

դիրսն առ Թագուհին, և զրեայ՝ քաղցրութեամբ հայիլ ի մեզ. և յաշխատանս մեր :

Ի Պոլսոյ, Ադուլեյիք ոմանք առաքեալ էին զպարոն Թումանն Ոսկանի որդի Աղաբաբեան, և խնդրեալ էին, որ իրը լինիցին նոքա ենթ իշխանութեամբ Ռուսաց, բաց Թուղթ տալ նոցա, որ ի խաղաղութեանն, մեր դեսպանն տեսեալ զնոսա ուղևորեսցէ, նոյնպէս և հրաման վասն նաւուցն՝ յամենայն ժամ ընկալնուլ զՀայսն յամենայն քաղաքաց. որոց անուանքն Թուին սատանօր կարգաւորապէս :

1. Մատիրոս Մալխասի Լազեան,
2. Կոզմայ Դանիէլով Եսայեան,
3. Թովմաս Ղուկասի Զէյլէլով.
4. Եսայի Դիմիտրով Եսայեան,
5. Յոհան Մարկուսով Ակնցի,
6. Մատթեոսի Գալստեան Թովմայեան՝ Զուղայեցիք,
7. Խաչատուր Գիլիի Թարզուլով,
8. Աւետիս Յովհաննիսի Նուրենց,
9. Թուման Ոսկանի Աղաբաբեան, որ ի նոցունց առ մեզ առաքեցաւ :

Ի Դեկտեմբեր ամսոյ 28, ի Տօնի որդւոցն Որոտման, եղև հաշտութիւնն Ռուսաց և Թուրքաց, ի ձեռն Գրաֆ Բէզբօրօտկուն և ռէիզ Աֆանդուն և այլոց. զիր դաշնադրութեանցն առաքեցին առ Թագաւորս, հաստատել և առաքել ի Յեռաշտալ միմեանց : Եւ ի սոյն օր ձեռնադրեցին զԳաբրիէլ արքիմանդարիտն եպիսկոպոս Աղքիրմանու և Բէնդէրու :

Ի 1792, Փետրվարի ի 11, զԳաբրիէլ եպիսկոպոսն՝ արարին մեարապօլիտ Մալդավու, որոյ աղագաւ՝ զբաղումս աշխատեցաք :

Ի սոյն ամսոյ 15, Գրաֆ գնաց ի Պետրպօլիս, և մեզ հրամայեաց ի Յեռաշ տպասել պատասխանւոյ Թագուհւոյն : Եւ ի սոյն միջոցի՝ մեռաւ երկրորդ կայսրն Հռոմայ-Լէուպոլ :

Ելեալ ի Յեռաշուս՝ մտաք ի Տուպասար, Մարտ ամսոյ ի 16, կրելով զՃանապարհական վիշտս :

Ի Մարտ ամսոյս 26 եկն պարոն գուբեռնաթն ի Տուպասար

Ի Յապրիլ ամսոյ 1, պարոն գուբեռնաթ Վասիլ Վասիլիչ Կախոսկին, ընկալաւ զՀրովարտակ ի յամենաողորմած կայսե-

թեամբ և արտասուախառն երկիրպագութեամբ. նաև՝ անդա-
նոր դատանեցեալ մերաղնէիցն՝ շնորհաւորեցաք ասուիճան մեք
և ընդ մեզ եղեալ ենարալ անշէիքն. բայց երկոքին եղբարքն
այնոքիկ՝ Միխայէլ Վասիլիչն և Վասիլ Վասիլիչ Կախովսկիքն
մեծաւ խնդութեամբ լցեալ, բաւական յոյս ետուն ազգին
մերոյ. իսկ որ մեծն է՝ ի կաճառս օծելոց ողորմած թագու-
հին, ի հրովարտակի իւրում անդ, հինգ զլխով հրամայեալ էր
պարոն գուբեռնատորին ամենայն կերպ ազգին Հայոց բաւա-
կանութիւն տալ և քաղաք շինել. զի և հեռաւոր ազգքն
մեր՝ լսելով զբարօրութիւն նոցա, ցանկասցին միաւորիլ ընդ
նոսա. այս ևս ի հրովարտակին այնմիկ յայտնեալ էր թէ՝
Հայոց Արք եպիսկոպոսն Յովսէփ՝ կարէ օգնական լինիլ քեզ.
որպէս մինչև ցայժմ դատանեցեալ է յայդպիսի գործս և ծա-
ռայել: Պարոն գուբեռնատորն ի նոյն օր ետ մեզ Ծ. մաջար
ոսկի, որ է 150 ռուպլի. հինգ եղն առաք և հաց և բաժա-
ներաք աղքատացն:

Ի սոյն ամսոյ 7, ասայնաք քարոզ և զամենեսեանսն միա-
մտեցուցաք վասն տեղւոյն. ի սոյն միջոցի՝ Պարոն գուբեռնա-
թորն՝ զձև տեղւոյն մերոյ որ կոչեն Պլան, ետ շինել և մեր
տեղն յատկացուցանել:

Ի սոյն ամսոյ 17, ի յաշխարհամատեան կիւրակէի՝ շաբաթի
օրն, ձեռամբ եղբօրորդւոյն իմոյ Բարսղին՝ զնոյն ձևն քաղա-
քին, զոր կոչեն Պլան, պարոն գուբեռնատորն առաքեաց առ
թագուհին՝ ձեռք դնել. որ յետ այնմ, զՀիմն քաղաքի արկ-
ցուք. նոյնպէս՝ և զտեսակ տեսակ խնդիրս՝ զորս տրարեալ էաք
վասն պակասութեանց խղճալեացն և հարկաւորութեանց նո-
ցին, և ևս վասն տնաշինութեանց և այլոց կերատուածոց, ա-
ռաքեաց և զայնս ընդ ձեռն առ ողորմած թագուհին և
խնդրեաց շնորհել զորս ամենայն՝ ունիմ գրեալ հայերէն և
Ռուսերէն ի դէֆթէրս մեր. Ա.Ջ Տեառն յաջողեսցէ, զկատա-
րումն տեսանել: Եւ զպօապօռուչիկ Թորոս Այվազովն առա-
քեցաք ի Նախիջևան զԹադդէոս վարդապետն բերել առ մեզ:

Մայիսի 5, նշանեցաք գիւղատեղն կոչելով Յովսէփով. ընդ մեզ
էին Ստեփան Դաւիթովն մեր գրագիր Պետր Տրոֆիմիչ Գօլիսովն,
Ստեփան Մարութեանն, Մնացական. Գալուստն և Մարտիրոսն:

զորս ի յԱղմէջիք առաքեցաք. ընդ նոսին և զմեր Փիլիպպոսն սարկաւագ արարաք : Եւ ի սոյն օր՝ երդուեցուցաք զՀասան-բակուրիւնն Գրիգորաւսլուս. և նոքա գրեցին Գուբեռնատին վասն երդմանն իւրեանց և վասն Աղքիրմանցւոյն և նոցին խնդրանաց, զայսմանէ՝ յայլ տեղիս տեսցես :

Ի 1792 Դեկտեմբեր ամսոյ ի 7, ելաք ի Նախիջևանու և բազում տառապանօք հասաք ի Մոսկով ի նոյն ամսոյ 21. տասնուչորսօրեայ վիշտս ճանապարհական կրելով. ի Մոսկով, սակս սուղ ժամանակաւ մնալոյն, ոչ արարաք զտեսութիւն մեծամեծաց. այլ փոյթ ընդ փոյթ ելեալ անտի ի նոյն ամսոյ 24 սակաւ ինչ նեղութեամբ ճանապարհային հասաք ի Պետերպօլք :

Ի նոյն թուոջ և ի նոյն ամսոյ 29 հասեալ ի կայսերապերճ քաղաքս Պետերպօլք, յաւուր չորեքշաբաթի. ի նոյն օրն ոչ դընացաք ի տեսութիւն, այլ յետ երկուց աւուրց գնացաք առ պարոն Ենարալ Զուպովն և Պոպովն և մեծ սիրով ընկալեալ ցուցին զբազում մարդասիրութիւնս ;

(Ուշիմ ընթերցող՝ այս վերոյ գրեալ երկու տունն, սխալմամբ աստ եղաւ) .

Ի Սեպտեմբեր 11. ձեռնադրեցաք զՄորեան տիրայու Յարութիւնն սարկաւագ՝ և զԲարսեղ որդին Մորեան Խաչիկի՝ չորս ասիճանաւոր արարաք :

Ի սոյն ամսոյ 12. օրն սուրբ Խաչ՝ ժամ արարաք. և ձեռնադրեցաք զսարկաւագ Յարութիւնն վերոյ գրեալ՝ քահանայ ըստ խնդրոյ հասարակութեան նոցա :

Ի սոյն ամսոյ 20. յաւուր երկուշաբաթի. գինի. կէսօրէի ի վեց ժամուն. Փիլիպպոս հոգեծին զաւակն իմ. բարեոք խոստովանութեամբ աւանդեաց զՀոգին իւր առ Աստուած՝ առանջի ոչացս. որով ճմլեալ պակասեցայց զկեանս իմ. ընդ տառապեալ և թարշամեալ կենաց իւրոց. և տրորեաց զսիրտ և զՀոգի իմ. ո՜հ ցաւոյս և կսկծանացս. թէ զինքրդ դառն է լեալ կորուսանել ուրուք զորդի իւր :

Ի սոյն ամսոյ 23. պատրաստեալ զնա յետ օրինաւոր աբարողութեան. և եղեալ ի փայտեայ դուռնոջ. առաքեցաք ի Նախիջևան ի նորաշէն սուրբ Խաչ վանքն մեր. անդ՝ ի հա-

Ի սոյն ամսոյ 29, յաւուր չորեքշաբաթի, մտաք ի կայսերական քաղաքս Պետրպօլիս և ի բազում ճանապարհական վնասուց՝ գտաք զհանգստութիւն:

Ի 1793, Յունվար ամսոյ 8, զնայաք ի տեսութիւն Պլատոն Ալէքսանդրիչ Պուպովին, և Վասիլ Սթեփանիչ Պոպովին, որք ընկալան մեծ սիրով և ցուցին զմեծ մարդասիրութիւնս:

Ի սոյն ամսոյ 9, յաւուր կիւրակէի, մատուցին զմեզ ինքնակալ կայսերուհւոյն, ընկալաւ զմեզ ի կավալէր գարթն մեծ շնորհիւ, ընդ մեզ էին Կարապետ վարդապետն և Աղայ Յովհաննէսն:

Ի սոյն ամսոյ 10, խալիչայն մատուցաք թադուհոյն, ընկալաւ սիրով և հրամայեաց պահել. և ի ժամ խոստովանութեան և հաղորդութեան, ի ներքոյ սահին արկանել:

Ի սոյն ամսոյ 16, Մուսին Փուշկին Վալէնթի Պլատոնովիչն մատուցին զմեզ Վէլիք քնեազին:

Ի Դեկտեմբեր ամսոյ 13, Վէլիք քնէինին մատուցին զմեզ: Եւ ի սոյն ամսոյ 14, մատուցին զմեզ երկուց Վէլիք քնեազացն: Առաջն յիշեմք զսարսափելի անցան Ֆրանցիոյ և զանողորմ արարս նոցին և զանպարտ սպանումն թագաւորին

Ի սոյն ամսոյ 16, Վասիլ Սթեփանիչն՝ մատոյց զինեղիրս մեր, որ վասն Գրիգորապօլցւոց՝ ողորմած թագուհւոյն:

Ի սոյն ամսոյ 17, ողորմած թագուհին զնոյն ընկալեալ խնդիրսն առաքեաց առ Ալէքսանդր Նիկոլայիչ Սամուէլովն կատարել և հաստատական պրէվիլեգ տալ: Եւ ի սոյն օր, Նախիջևանցւոց խնդիրսն ևս Վասիլ Սթեփանիչ Պոպովին մատուցաք, յայտնել թագուհւոյն: Զոր ի միւսին առ ենարալ պրգօրօր Սամուէլովն առաքեաց գրով կատարել զինդիր մեր զորոյ յայտմհետէ գրուեց:

Ի 1793 Մարտի 25, զկնի կէսօրի վեց ժամուն օրն ուրբաթ, ամենաողորմած թագուհին ի ձեռն ենարալ Վասիլ Սթեփանիչ, առաքեաց առ մեզ ի տուն Աղնիւ աղայ Յովհաննէսին բռլիանթէ խաչ վեղարի ճակատն դնելի, գեղեցկաշէն յատուկ սպիտակ բռլիանթ. իսկ եզերքն կանաչ զմրուխտք ի սելի շէնթի, նաև վերարկու մի ի տեղն փիլոնի. զոր մանթի կոչեն. որ է երկայն յոյժ յերկոյս, և ունի յիւրաքանչիւր կողմն, երեք երեք

լենք, այսինքն՝ բալտայի նշան երկու կողմն սպիտակ և ինքն կարմիր նման ամբլասի գործեալ ապրուշումն, զոր փեղք անուանակոչեն, ի տեղն չափուստին, կարմիր մանմանուք ոսկի շերիտիւ, կամ բուզբենդիւ և խաչք. նոյնպէս և եղերս քրգանցից և կամ փէշից թարց խաչն, կապուտ խառայ ի նոյն կէտ. խաչն կարեալ ետ ենարալ Պօպոմն և մանթին ըզ գենուլ և շնորհակալ լեալ ի թագուհւոյն, որպէս և արարաք և ըստ պատուիրի նորա, մեք գնացաք առ սրբազան Գաբրիէլ մետրապօլիտն և շնորհակալեցաք վասն ընկալեալ ողորմութեանցն, իսկ ինքն դարձաւ առ թագուհին. ահա ոսկի դար, ահա լուր անապառելի ազգիս մերոյ ի լուսաւորչի անտի, ահա պարգև անհամեմատ և գերազանց, ահա ողորմութիւն Աստուծոյ առ ազգս մեր, ահա անակնուանելի բարութիւնն Աստուծոյ. հեղեալ մեզ ի յամենայն կայսերութեան ամենայն Ռուսաց, որպէս պատկաւորեալ զմեզ և զազգս մեր երևելի արար զմեզ յաշխարհի, զի ի թագաւորութեան իւրում երեք երևելիք միայն են. որք կրեն զխաչ ի ճակատ վեղարին. Պետերբուրգումն, Մոսկովումն և Քիեվումն, և սոքա Մետրապօլիտ անուամբ և սպիտակ վեղարով սև վեղարով ոչ սայգ եպիսկոպոսացեալ, բայց միայն ամբրոսք և արք եպիսկոպոսունք Եկատարինէսլաւու որ հանդեաւ ի տէր:

Ի Մարտի 27, օրն կիւրակէ, խաչն ընկալեալ ի ճակատս և մանթին զգեցեալ ընդ ազնիւ Ազգայ Յովհաննէսին գնացաք ի պալատն, ի Ստոլոմոյի տանն ուր թագուհին զկերակուրս ճաշակէ, անդ մատոյց զմեզ ենարալ Պրգօրօր և ենարալ Պօռօչեկ՝ Ալէքսանդր Նիկոլայիչ Սամուէլոմն. կանգնեցաւ թագուհին և մեք հայերէն ասացաք շնորհակալութիւն ինչ որոյ և Ռուսերէնն ետուք նմա. և մինչ մեք ասէաք, նա նկատէր ի ճակատ վեղարին և ի յարմարութիւն պարգևին իւրոյ. համբուրեալ զձեռս նորա, գնացաք առ մեծ իշխանն և ժառանգն և առ կենակիցն նորա և առ որ էին, և նոքա կրկին կրկին շնորհաւորեցին մեզ, նոյնպէս և ամենայն իշխանքն և առ Վէլիք քնեալ Ալէքսանդր Պավլովիչն, ոչ կէս ժամ խօսեցաւ ընդ իս ռուսերէն և Եհարց զԳրիգորապօլաւ ժողովրդենէն և նոցին արտօնութեանցն և շինութեանցն և այլոց:

Ի Մարտի ԼԷ, օրն հինգշաբաթ ժամ արարաք վասն ըզ պարտաւորական շնորհակալութիւնս մեր մատուցանելոյ Աստուծոյ յաղագս ընկալեալ պարգևացն : Եկին բաղում իշխանք նաև Ֆռանկսուզաց թագաւորի աջք եպիսկոպոսն : Եւ իշխանքն որք ընդ եղբօր նորա Գրաֆ Դարթուին եկեալ էին, որք մեծապէս հաւանեցան նոքա և ամենայն իշխանքն՝ եկեալ ի հանդէսն. յետ պատարագին մատուցաք սահմանեալ աղօթս թափօրիւ, վասն երկարութեան անդին կենաց թագուհւոյն և իւրոյն ծաղափթիթ զաւակացն : Զկնի արձակման պատարագին նոյն եպիսկոպոսն Ֆռանկսուզաց, իշխանք նոցա և Ռուսաց եկին ի տուն աղայ Յովհաննէսին. վասն որոյ պատրաստեալ անդ զուտելիս և զխմիչս շնորհաւորեցաք : Զկնի այսմ նոյն Գրաֆ Դարթուին եղբայրն Ֆռանկսուզաց թագաւորի, տեսանելով զաղայ Յովհաննէսն զբազում շնորհակալութիւնս մեր մատուցեալ վասն ընկալման եպիսկոպոսին և իշխանաց իւրոց ցուցանելով նոցա զՀանդէսն եկեղեցական և զսպաւորութիւնս :

Մարտի 26, հրամանաւ թագուհւոյն կաղմեցին ի եկեղեցիս Լատինացւոց մեծ տեսարան, և զթաղման կարգն սպանեալ թագաւորի կատարեցին անդ : Եպիսկոպոսն Ֆռանկսուզաց ժամարար՝ և զմեզ հրաւիրեցին 'ի հանդէսն այն, յորում էր և ինքն Գրաֆ Դարդուայ՝ եղբայրն սպանելոյն. երդն էր նոցա մուզիկ. իշխանքն Ռուսաց ամենեքեանքն էին անդ. մեքենայն այն որ պատրաստեալ էին և ի վերայ նորա զբոլոր նշանս թագաւորաց և զպէսպէս խորհրդաւոր նկարս . գինն քահանայիցն եղև եօթն հազար ռուբլի :

Ի 1793 Մայիսի 4, օրն չորեքշաբաթ, ածաք Սանկտպետերբուրգ Հանգստի եկեղեցին յանուն յարութեան Տեառն. զոր շինեաց աղնիւ աղայ Յովհաննէսն ի յիշատակ միակ որդւոյն իւրոյ հրամանաւ թագուհւոյն, զոր վասն մխիթարութեան սրտի նորա, ողորմութեամբ հրամայեալ էր նմա դրով ունել զտեղի գայն, շինել եկեղեցին. և զմարմին որդւոյն փոխել անդ, որպէս և արարին և առջի սեղանոյն ամփոփեցին. և զդիրս գերեզմանաց իւրեանց. յաջմէ և յահեկէ նորա պատրաստեցին

հայրն և մայրն։ Ի յօրն օծմանն, եղև յոյժ սուգ և տրրտմութիւն ի քարոզելս, որպէս ինձ, նոյնպէս և հասարակութեանն, զի որպէս թէ՝ պսակն էր հանդուցելոյն զօծումն եկեղեցւոյն։ Ի սաստիկ կսկծանաց սրտի, ծնողք նորին ազնիւ աղայ Յովհաննէսն և խաթուն կատարինէ Իվանովէն գնացին ի Այքշայ կոչեցեալ հովանոցն. ոչ մնացին տեսնել զգալի հանդէսն օծման եկեղեցւոյն։

Պիսի չարուենակուի։

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԱՂԱՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Երևանայ բերդի բակը, մի քանի տեղ պատերազմական զործիքներ են թափուած, դռների առաջին կանգնած են Ռուսաց պահապաններ, մի քանի թուրքեր այս կողմից զալիս, այն կողմն են վազում։

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԱՂԱՍԻ հեծելազօրաց զօրապետի հագուստով.

Էս ի՞նչ խորին լռութիւն է, կարծես թէ ահագին բերդի մէջ ոչ ոք չըլինի, կարծես թէ նոր չլինի Երևանն առած, ամէն բան խաղաղութեան մէջ է, ո՛հ, մի քանի ժամանակ յառաջ կարո՞ղ էր Հայը համարձակ այս բերդումը մտնել զալ իսկոյն գլուխը կերթար։ Այս թողնենք, ես քա՞նի քանի անգամ լսել եմ, որ իմ հայրս այս տեղ բանտարկեալ է, արդեօք ո՞ւր է. արդեօք գեռ կենդանի՞ ես, հայր, թէ քո կորած որդուոյն թողել ես աշխարհիս երեսին տարաբաղդ լինիլ մինչև իր մահը։ Վա՜յ քեզ, Աղասի, հինգ տարի էր Երևան չէիր տեսել, հինգ տարի էր անհամբերութեամբ ուզում էիր գալ այս բերդը և աղատել քո հօրը. զորա համար մինչև այն կէտն աշխատեցար, որ սրտիդ փափաքը կատարուեցաւ, բայց հիմա Երևանը ոտքիդ տակին է, հիմա համարձակ տրորում ես այն տեղերը, ուր քո արեանն էին ծորաւում և չես զըտնում քո սրտի ցանկալին, քո զառամեալ հօրը։ Հա՜յր . . . հա՜յր. . . բայց ահա այն ամրոցի մօտ մի մարդ է կանգնած, գնամ իմանամ ո՞վ է, մի քանի հարցեր անեմ նրան, գուցէ նա

գիտենայ իմ խնդիր հօր որպիսութիւնը։ (Գնում է մարդոյ մօտ.) Ո՞վ ես դու եղբայր, կամ այս տեղ ի՞նչ գործք ունիս։

ԲԱՆՏԱՊԵՏ.

Ես մի խեղճ Հայ եմ, երկու տարի է Սարդարի հրամանաւը բանտապետ եմ ես բերդումը, Ռուսը առնելուց յետոյ, շատ խնդրեցի որ ինձ ազատեն, բայց Ներսէս սրբազանը, որ ճանաչում էր ինձ, պատուիրեց սպասել մինչև երեկոյ, երբ բոլորը բանտարկելոցը արձակելուց յետոյ և ինձ կազատեն։ Ես հիմա բանտի դռանը սպասում եմ անհամբեր երեկոյեան ցանկալի ժամին։

ԱՂԱՍԻ կողմը.

Գտայ, ում կըցանկայի տեսանել։ (Մարդին) Եթէ դու երկու տարի է բանտապետ ես, անպատճառ կը ճանաչես մի ծերունոյ, որ միշտ ողբում է և «Աղասի» է կանչում, կամ թէ մի այլ մարդի, որ միշտ Մուսա է ձայն տալի. ասա խնդրեմ, այսպիսի մարդիկ կա՞ն քո բանտի մէջ։

ԲԱՆՏԱՊԵՏ զարմացմամբ եւ կողմը.

Սա ո՞վ է, որ Տանուտէր Օհանէսին ճանաչում է, կարելի է նորա որդուցը լուր ունենայ։ (Աղասուն) Այո՛, տէր, քո ասած երկու անձինքն էլ այս տեղ են և հիմա բանտումն են, դուցանից մէկն է Գանաքեռցի Տանուտէր Օհանէսը, իսկ միւսը՝ Յարութիւնը, դու որ տեղից ես ճանաչում դրանց։

ԱՂԱՍԻ.

Աստուածասէր մարդ, բարերարութիւն արա ինձ, բաց բանտիդ դուռը և ցոյց տուր ինձ այդ մարդկանցը, ես նոցա հետ փոքր ինչ խօսք ունիմ, շուտով դուրս կը գամ և դու կստանաս քո բարեգործութեան վարձը։

ԲԱՆՏԱՊԵՏ.

Ինձ համար մեծ ուրախութիւն էր կատարել քո խնդիրը, մանաւանդ որ մեր կեանքը ձեզ ենք պարտական Երևանայ ազատութեամբը, բայց ներիր ինձ, ես հիմա չեմ կարող բանալ բանտի դուռը, Տանուտէր Օհանէսն էլ ինձ սիրելի է, ես միշտ

նրան պատուում էի, բայց մինչև երեկոյ չեմ կարող սրբազան Ներսէս եպիսկոպոսի հրամանին ընդդիմանալ։

ԱՂԱՍԻ.

Յատուկ աղերսում եմ, ես սաստիկ գործք ունիմ նրա հետ, նա քեզանից մեծ շնորհակալութիւն կառնէ, եթէ դու ինձ ներս թողուս, խնդիրս մի՛ մերժեր, բայց դուռը, ես մեծ իրաւունք ունիմ զօրաց մէջ, վաղը ես քեզ կբարեբաղդացնեմ։

ԲԱՆՏԱՊԵՏ.

Ի զուր է քո խնդիրդ, եթէ դու ինքդ լինիս առաջին զօրապետն անգամ, Երևանայ բերդն առնողը, իմ կենաց տերը, նոյնպէս չեմ կարող առանց սրբազան Ներսէս եպիսկոպոսի հրամանին բանալ դուռը, նա ինձ պատուիրել է այսօր ամէն օրից շատ զգոյշ լինիլ որ մի՛ գուցէ թշնամիք դան և բարեկամական պատրուակաւ ներս մտնեն, ինձս պատճառեն խեղճ բանտարկելոյը. այսօր քանի՞ թուրք եկել խնդրել են բանալը մտնել, բայց ես չեմ թողել քեզ էլ նոյնպէս չեմ թողուլ։

ԱՂԱՍԻ գալով դէպի ժողովուրդը.

Ամէն կողմից յոյսս ի դերև ելաւ, ես մինչև երեկոյ չպէտք է հօրս տեսնեմ. ախ, սիրտս ո՞րքան անհանդիստ է, հինգ տարի այսքան դժուար չեն անցել օրերը, որքան այս մի քանի ժամը, ի՞նչ մեծ տխրութիւն բոպէ առ բոպէ ծանր բեռի պէս բարձրանում է իմ վերայ, սիրտս մի չարագուշակ բան է զգում, կարծես թէ հօրս յաւիշտակումն իմ ձեռքիցը, կարծես թէ արժանի չըպէտք է լինիմ տեսնելու նրան, կարծես թէ մէկը թեւից քաշելով դուրս ձգում լինի ինձ այս բերդիցը. այս ի՞նչ դժուար բոպէ է, կարծես թէ միւս անգամ ուրախութեամբ չըպէտք է դառնամ Նազլուիս մօտ, թանձր խաւարն աչքերս պատել է։ (Նստում է եւ փոքր ինչ լռում։) Հիմա ես ո՞ւր կորչիմ, մնամ նստած այս հաստատատ բերդումը, բայց գնացող ես կողմերն ի՞նչ կասեն, լաւն այն է գնամ մի երկու ժամ էլ սպասեմ. (Վեր է կենում եւ ուզում է դուրս գնալ, բայց կանգնում է։) Ոտքս չէ գնում, ի՞նչպէս տարաբաղդ հօրս բանտումը թողում և հեռանամ. միւսանգամ գնամ բանտապետին խնդրեմ, արդեօք

յայտնեմ նրան իմ ով լինելը, բայց մի՛ գուցէ նա ամէնին յայտնի. էն ժամանակը... գնամ, գնամ։ (Գնում է բանտապետի մօտ)
Հայ քրիստոնեայ, խղճա էն ծերին, թող երեսը տեսնեմ, մի գաղտնիք կայ, որ չեմ կարող քեզ յայտնել. քեզ համար վարձք և օգուտ է։

ԲԱՆՏԱՊԵՏ.

Վերջին անգամ ասում եմ քեզ, որ անկարելի է քո խնդիրը կատարելը. եթէ կամիս, գնա սրբազան Ներսէսից հրաման բեր, բանամ։

ԱՂԱՍԻ գալով դէպի ժողովուրդը.

Ներսէս եպիսկոպոսին գնալ, նա ինձ ասաց սպասել մինչև խաղաղութիւնը տիրելը, ես խօսք տուի, հիմա ի՞նչպէս գընամ։ Ո՞վ դատն ճակատագիր, ո՞վ անփարատ տրտմութիւն, որ ինձ պատել է, հոգիս դուրս է գալիս, գնամ Ներսիսի ոտքերն ընկնեմ, առնեմ իմ ցանկալի հօր ազատութեան հրամանը... ո՞վ հայրական քաղցր օրհնութիւն։

Աղասին դուրս է գնում, նրա՞ից յետոյ էլ Բանտապետը բանտի դռներին նայելով դուրս է գնում.

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՀՄԱՏ. ՎԱԼԻ և ՆԱՂԻ.

ԱՀՄԱՏ պատերի տակերը նայելով.

Ես տեսայ, որ նա էս բերդը մտաւ, ես նրա երեսիցը լաւ ճանաչեցի, որ ինքն էր, կերպարանքը բոլորովին չէր փոխուել. ես ուզում էի ճանապարհին սպանել նրան, բայց Ռուսաց զինուորներ կային, վախեցայ և նկայ ձեզ կանչելու. հիմա չգիտեմ, ո՞ւր է գնացել։

ՎԱԼԻ.

Դու իսկապէս իմացար, որ նա Աղասին էր, այն անօրէն Գանաքեռցին, այն աւազակապետը, որ իմ եղբօրը Արարատումն սպանեց, քո հօրը և օրա որդւոյն Խլղարաքիլիսի մօտ։

ՆԱՂԻ·

Եթէ նա էր, պէտք է պատռել ամէն տեղ, թէ էս օր չը յաջողեցաւ, վաղը պէտք է անպատճառ սպանել մեր աչքերը թող դուրս գայ· եթէ նա Ռուսի զօրապետութեան ասիճանում մեր առջևը համարձակ շրջի էն քաղաքումս ։

ՎԱԼԻ·

Բայց եթէ յանկարծ նա չլինի և ուրիշ մարդի սպանենք նորա փոխանակ· էն ժամանակ թէ մեր վրէժն առած չենք լինիլ և թէ այն մարդի արիւնն էլ կըմնայ մեր սերնդոց վերայ ։

ԱՀՄԱՏ·

Ի՞նչ արիւն, նրանք անհաւատ մարդիկ են, մեր Մահմետի կրօնին թշնամի· հիմա էլ եկել մեր իշխանութիւնը յափրշտակելու· ոչ միայն մէկ մարդի, մենք պէտք է աշխատինք, մեր սերնդին էլ աւանդենք, որ ամէն քրիստոնէից վրէժ առնունք։ Ես շատ լաւ իմացայ, որ նա Աղասին էր· էրեկ երկու երեք Հայ իրար հետ գնալով միմեանց պատմում էին, թէ Աղասին էլ Ռուսաց բանակումը պէտք է լինի· այսօր էլ ես աչքս տեսայ։

ՎԱԼԻ·

Եթէ այդպէս է, գնանք, ուր որ լինի գտնենք, մեր արիւնը առնենք նրանից, չթողնենք որ հօր երեսն անգամ տեսնի և վերջին բարևը տայ· էդ աւելի ցաւ կը լինի, թէ Աղասու աղգակցացը և թէ բոլոր Հայերին ։

ՆԱՂԻ·

Այս իսկ բոպէն լինի մեր ժամադրութիւնը· ոչ ուտենք· ոչ խմենք, մինչև սպանենք Աղասուն, կամ թէ Աղասին էս չը լինի, գտնէ նրա նման մէկին, եթէ նման էս չը լինի, գտնէ Հայ քրիստոնեայ է, մեր Մահմետին թշնամի է ։

ԱՀՄԱՏ·

Այն մարդը ոչ էլ լինի· պէտք է ես նրան սպանեմ· իմ սիրտս վկայում է, որ նա Աղասին է· այն մեր արենապարտ Աղասին ։

ՎԱԼԻ·

Իմ սիրտս էլ զգում է· անհնար է· որ ես նրան չը սպանեմ

եթէ Աղասին էլ չլինի, նրա անունով պէտք է էդ մարդին սպասնեմ, սուրս պէտք է սրտումը խփեմ։

ՆԱՂԻ։

Իմ սուրն ևս սրտումը պէտք է խփեմ, մինչև վաղը ես իմ փափաքին հասած կը լինիմ։

ԱՀՄԱՏ։

Ուրեմն գնանք, սպանենք նրան, ուր և լինի, մեր վրէժն առնենք, իմ սուրն ևս մէջքումը, երեք սուր ի միասին։

ԵՐԵՔՆ Ի ՄԻԱՍԻՆ։

Ի միասին, ի միասին, երեք սուր ի միասին։

Դուրս են գնում.

ՏԵՍԱՐԱՆ Գ։

ԲԱՆՏԱՊԵՏԸ ներս գալով եւ բանտի ղըռները բանալով.

Հիմա ուր է այն զորապետը, թող գայ տեսնէ Տանուտէր Օհանէսին, ես հրաման առայ սրբազան Ներսէսիցը։ (Առանձին առանձին դուրս բերելով բանտարկելոցը եւ պատի մօտ նստեցնելով։) Եկէք, ով խեղճեր, ահա ձեզ ազատութիւն։ Երևան թուրքի ձեռքիցն ազատուեցաք, դուք հիմա ազատ էք, շուտով կը գայ սրբազան Ներսէսը և ձեզ բոլորովին դուրս կը տանի։

Բանտարկալքը գալիս պատի տակերին նստում են։

ՏԵՍԱՐԱՆ Դ։

ՍՄԲԱՏՈՎ ԵՎ ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ ներս գալով եւ չքտեսնելով բանտարկելոց։

ՍՄԲԱՏՈՎ։

Փառք Աստուծոյ ի վերջոյ կարողացանք նպատակներիս հասնել, մեր տառապեալ ազգը ի վերջոյ ազատուեց Պարսից բռնակալութենից, ահա, եթէ իմանաս, Մէլիք, թէ որքան այր-

ու

՝ մեր սրբազան Ներսէս եպիսկոպոսի սիրտը՝ տեսնելով մեր խեղճ Հայաստանը և մեր մայր Աթոռը անհաւատների լծի տակ ճնշուած։

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ։

Բայց եթէ իմանայիր, իշխան, թէ ի՞նչպէս այրուում էի ես, երբ իմ աչաց առջև Հասան-խանը տաք երկաթներով դաղուում էր մեր խեղճ ազգին և ինձ վշտացնելու համար զանազան դառն հոյհոյանքներ էր թափում մեր սուրբ հաւատոյ վերայ։ Աստուած բարի տայ Սվան գուլի խանին իր գործքովը, որ խիղճ ունենալով իր մէջ, միշտ լսում էր իմ խնդիրքը և ամէն այդպիսի տեղերը օգնում ինձ։ Ահա նայիր, պատի տակին ընկած կիսաշունչ ծերունուն էն։ Բանաքեռցի Աբովենց Օհանէսը, իսկ մուանները Բանաքեռի պատուելիքն են։ խեղճերը այս հինգ տարի է բանտակոտած են Տանուտէր Օհանէսի որդի քաջ Աղասու պատճառաւ, որ մի աղջկայ համար Սարդարի Ֆարաշներին անարգելով և Սարդարի հրամանը ոտնատակ տալով՝ փախել էր Ղարսայ հողը։ Եդ էլ բաւական չէ, Սարդարը յիսուն դինուոր ուղարկեց նրան բռնելու, իսկ նա իր չորս ընկերներովը մինչև քսան հոգւոյ սպանել էր Աբարան, Մնացեալքը յետ էին փախել։

ՍՄԲԱՏՈՎ։

Ի՞նչ, այն ծերունին Տանուտէր Օհանէսն է, Աղասու հայրը, այն քաջ երիտասարդի։ Ա՛խ, ի՞նչ կը լինէր Հայաստան նրա նման հազարը ունենար, այն ժամանակ կարող էինք ասել, թէ Հայաստան իր նախնի փառքին հասած կը լինէր։ Եւ այն քաջ երիտասարդին տեսայ Թիֆլիզ։ նա եկել էր Շամքոռ Մատաթովի մօտ և յայտնել Պարսից զօրաց մօտենալը։ Մատաթովն էս իր կողմանէ ուղարկել էր Թիֆլիզ։ այն տեղ ստացաւ նա զօրապետութեան ասիճանը։ լսելով, որ Երևանայ վերայ պէտք է գնան։ նա խնդրեց սրբազան Ներսէսից, որ իրեն էս մեր գօրաց հետ վեր առնեն և այժմ էս ահա բանակումն է։ Ինձ Ներսէս եպիսկոպոսը ասաց, որ նա մեծ վնասդործութիւն արեց բերդն առնելուս։ ծանօթ լինելով բոլոր տեղերին, ցոյց

տուեց, թէ ո՞ր տեղից աւելի յարմար է թնդանօթ արձակելը, կամ որ տեղից յառաջ գալը. շուտով. կարծեմ, նորա ասուածանն ևս կաւելանայ :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ.

Մբոռէ հիմա Ազասին էս տեղ զօրայ հետ է, եթէ նա իմանայ, թէ իր տառապեալ հայրը հինգ տարի այս բերդումը տանջուելով վերջին շունչն է հասել, գիտեմ նորա ապնիւ սիրտը, թէ ինչպէս ներս կընկնի և իր հօրը դուրս կը տանէ. բայց չգիտեմ նորա ընկերքն ինչ եղան :

ՍՄԲԱՏՈՎ.

Նա պատմում էր, թէ ընկերքը Պարսից բանակի մօտ փամբակումը ցրուեցան իրանից և դրա համար շատ հոգս էր քաշում :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ

Գնանք, իշխան, գնանք ուղարկենք Ազասուն էս տեղ, թող գայ խլէ իր հօրը մահուան ձեռքից. ամա թէ իմանայիր, ինչ մութ և խոնաւ էր Տանուտէր Օհանէսի արգելարանը, չգիտեմ ինչպէս ապրեցաւ այդ խեղճ ծերունին մինչև հիմա :

ՍՄԲԱՏՈՎ.

Կանչենք բանտապետին, պատուիրենք յառաջ բերել այդ խեղճերին այն ծմակից այս արեգունի տեղը, թող փոքր ինչ հանգիստ առնուն, մինչև բոլորովին դուրս գան բերդիցը :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ գնալով դէպի տեսարանի խորքը.

Բարի բանտապետ, յառաջ բեր այս ողորմելիներին, թող փոքր ինչ արև տեսնին : (Բանտարկելոցը.) Եկէ՛ք, ով խղճալիք, բաւական նեղութիւն կրեցիք, ահա արևը, հանգստացէ՛ք այն տեղ փոքր ինչ մի՛ վախիք, էլ Պարսից բռնութիւն չկայ, էլ հասան խան չկայ, որ ձեզ պատժէ, նա հիմա բռնուած է և բանտարկուած բերդումը. Արդարը վաղուց փախել է. Պարսից խաներն ու բէկերը գլուխ առել կորել են. մենք հիմա կերթանք ձեզ համար հոգս կը քաշենք. շուտով կազատուիք էս տեղից :

Դուրս են գնում.

ՏԵՍԱՐԱՆ Ե·

Բանտապետը բերում է բոլոր բանտարկելոցը եւ նստացնում յատակ.

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ·

Ա՛խ, իմ ուրախութիւնս էն կը լինի, որ տեսնեմ միւս անգամ իմ որդւոյս, (ձեռքը ճակատին դրած.) ապա ո՞ւր է · · · Թող դայ, դայ տեսնեմ· Աղասի, որդի, հոգի, քանի՞ մի քանի ինձ մաշես, երկնքումը վաղուց եմ տեղս պատրաստել, արի՛ մէկ շունչդ առնեմ, աչք չէ՞ մնացել, որ քեզ տեսնեմ, ձեռք չունիմ, որ քեզ գրկեմ, միայն մնացել է լեզուս և ականջս, թո՛ղ ձայնդ լսեմ և այնպէս խեղճ մօրդ լաւ տանեմ· ա՜խ, մայրդ երջանիկ էր, նա Աղասի կանչելով՝ շուտով թողուց էս դառն աշխարհը, ես՝ ես միայն մեղաւոր էի, որ մինչև հիմա մնացի· արի՛, արի՛, որդի՛, արի՛ հոգ ձգի՛ր քո հօր երեսին ։

ՑԱՐՈՒԹԻՒՆ·

Լաց լինի՛նք· լաց լինի՛նք, Տանուտէր Օհանէս, աշխարհումս մեզանից աւելի թշուառ մարդ չկայ, ի՞նչ էինք արել, ո՞ւմ էինք մնաս տուել, որ մեր առաջն եկաւ, ո՜հ հինգ տարի է զրկուած ենք որդուց· հինգ տարի է դառն նեղութեան և խաւարի մէջ ենք· ինչի՞ էս հինգ տարումը Աստուած մեր հոգին չառաւ· բայց կարելի է Աստուած մեզ ողորմում է, կարելի է պէտք է տեսնենք մեր կորած որդուցը· ա՜խ, դու լաց, Տանուտէր Օհանէս քո Աղասուն, իսկ ես իմ միակ Մուսային, ո՜հ, Մուսա՛, Մուսա՛ · · · · ·

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ·

Աղասի՛, Մուսա՛, կարո՛, վարդ՛, վանի՛, հինգ ընկեր, եղբօր պէս մեծացաք, իրար հետ սէր վայելեցիք· իրար հետ էլ ձեր խեղճ ծնողացը կրակի մէջ ձգեցիք· Աղասի՛ · · · որդի՛ · · հոգի՛ · · · · · ։

ՏԵՍԱՐԱՆ Զ·

Մուսա կուրացած եւ մի մարդ կուռը բռնած.

ՄՈՒՍԱ ներս գալով.

Ա՛խ, ո՞ւր է, ո՞ւր է իմ տարաբաղդ հայրը, ցոյց տուր ինձ, ի սէր Աստուծոյ. հինգ տարի այդ քաղցր անունը այրել կը-բակել է ինձ :

ՄԱՐԴԸ տեսարանի խորքերը նայելով.

Մի ժամ յառաջ նրանք բոլորը էս տեղ էին, հիմա չգի-տեմ ի՞նչ եղան, բայց ահա հնռուռումը ժողոված են, գնանք այն տեղ :

ՄՈՒՍԱ·

Տա՛ր, տա՛ր ինձ, ով Աստուածասէր Հայ, թող ես գոնէ առ-նեմ հօրս վերջին օրհնութիւնը, յետոյ հոգիս տամ :

ՄԱՐԴԸ տեսնելով բանտարկելոց մէջ Ցա-ռութիւնին.

Ո՛վ անբաղդ հայր, ահա քո կորած որդին, ահա քո Մուսան :

ՄՈՒՍԱ·

Հա՛յր, անբաղդ հայր, ո՞ւր ես, մօտ արի գիրկդ ընկնիմ, մօտ արի հայրական արտասուքդ թափիր որդւոյդ խաւա-ռեալ աչքերի վերայ :

ՑԱՐՈՒԹԻՒՆ գրկելով.

Մուսա՛, իմ աղնիւ որդեակ, դո՞ւ ես որդի, թէ երազեմ տեսնում: այսքան նեղութիւնից յետոյ ուրեմն արժանացայ որդւոյս տեսութեանը : (Նայելով աչքերին.) Վա՛յ ինձ, էս ի՞նչ եմ տեսնում, որդւոյս աչքերը հանած : (Թուլանալով.) խաւա-ռիր աչքեր, նրա համար նեղութիւն և վիշտ կրեցի, որ վերջը տեսնեմ որդւոյս աչքերից զրկուած, ով դառն օրհաս·մեռիր, Ցարութիւն, մեռիր, այսուհետև քեզ ապրիլը հարկաւոր չէ :

ՄՈՒՍԱ·

Հա՛յր, տուր ձեռքդ համբուրեմ, օրհնիր, հա՛յր, օրհնիր տարաբաղդ որդւոյդ, բաւական է որքան տագրեցայ. քո վերջին

օրհնութիւնն եմ խնդրում միայն և այդ կը լինի իմ մխիթարանքը։ Մուսան չի ուզում այսուհետև աշխարհիս երեսին մնալ։

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՀԱՆԷՍ։

Մուսա՛, իմ Աղասուս թեև ու թիկունք, դու միայն ես, դու թողել ես Աղասուս, թէ կայր բազդը քանդելով իմ տունս խլից նրան քեզանից։ Մուսան և՛ չ Աղասին, Աղասին և՛ չ Մուսան, ի միասին մեծացած՝ ի միասին սէր վայելած՝ ի միասին տարաղիր եղած, հիմա վա՜յ մեզ։ մինը բոլորովին կորած, միւսը աչքերից զրկուած։ էլ ինչի՞ ենք ապրում։ Ցարութիւն, ինչի՞, հող տանք գլխներիս, ձիւն տանք արևներիս, այսօր պէտք է մեզ ապատեն այս տեղից։ մեզ ի՞նչ հարկաւոր է ազատութիւն։ Աղասուց և Մուսայից զրկուած՝ հինգ տարի խնամ և մութ բանտումը ծանր շղթաներ կրելից յետոյ՝ մենք նո՞ր պէտք է մխիթարուինք։

ՑԱՐՈՒԹԻՒՆ։

Մուսա՛, որդի՛, Զանգուն ներքևը իր բերանը բաց է արել մի քանի օր կայ, որ Հայոց գլուխ չի մատաղ արել իր անկուշտ որկորին, դու կաց, որդի՛, մենք պէտք է գնանք, զոհ լինենք նրան։

ՄՈՒՍԱ։

Հայր, Տանուտէր Օհանէս, երկո՞ւսդ էլ մեկ կապանքի մէջ ձեր որդուց փոխանակ անիրաւ Պարսկաց պատժին էք ենթարկուել։ . . . . Աղասի՛, Աղասի՛, գլխովդ պտուտ գնամ։ քանի քանի անգամ քո քաջ ընկերներովդ կամենում էիր յանկարծ դալ յարձակուիլ Երևանու բերդի վերայ։ արենկեր Հասան-խանին, Հայաստաց Սարդարին քո քաջ բազկին, քո անսխալելի սրին զոհ անել։ ես՝ ես քո սևերես Մուսան չթողի։ Բայց ինչի՞, ինչի՞ Հասան-խանին խնայեցիր, որ քո Մուսայի աչքերը հանեց և քեզ քո սիրելի ընկերներիցը կարօտ թողուց, ո՞վ գիտէ, ո՞ւր ընկար դու։ իսկ մենք սղրմելիքս այս օրին հասանք։ Ա՜խ, ո՞ւր ես, Աղասի՛, սուրբ Սարգսի նման տէրն նեղելոց օգնութիւն էիր հասնում։ դանէ այս նեղ դրութեան մէջ քո խեղճ հօր վերջին շնչին և օրհնութեանը հասանէիր։

ՏԵՍԱՐԱՆ Է·

ՆՈՅՆՔ՝ ԱՂԱՍԻ ԵՎ ՄԻ ՄԱՐԴ·

ՄԱՐԴԸ *ցոյց տալով մատով.*

Ահա Տանուտէր Ոհանէսը՝ որին ցանկանում էիր տեսնել՝ այն ամենից ծերն է՝ խեղճը իր որդու համար այդքան տանջանքները կրելով այդ տեղն է հասել։

ԱՂԱՍԻ *վազելով եւ հօր գիրկն ընկնելով.*

Հայր՝ իմ քաղցր հայր՝ դեռ կենդանի՞ ես՝ դեռ քո կորած որդուոյն՝ քո սեւերես Աղասուն յիշո՞ւմ ես՝ հայր՝ հայր։

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ·

Ո՛վ Աստուած՝ էս ի՞նչ ձայն՝ Աղասի՝ . . . որդի՝ . . .

ՄՈՒՍԱ *ձեռքերն ածելով.*

Աղասի՝ քո ձէնն եմ լսում՝ փառք քեզ Արարիչ՝ թոզ հիմա հոգիս տամ։

ԱՂԱՍԻ *մէկ ձեռքով հօրը գրկած՝ միւսովը Մուսային գրկելով.*

Տէր Աստուած՝ էս ի՞նչ օր է ինձ համար՝ Մուսա՛՝ Մուսա բերդում՝ (նայելով երեսին) ո՞հ՝ խաւարի՞ իմ աչքեր՝ Մուսա՝ Մուսա՝ դու էլ Աղասու համար աչքերդ մատաղ տուիր։

ՏԱՆ՝ ՕՀԱՆԷՍ *որդուոյ գրկումը թարկացած.*

Բէ՛ր երեսդ համբուրեմ՝ որդի՝ հայրական օրհնութիւնս քեզ պահպանեց՝ մայրդ քօչի ճանապարհին էր հոգին աւել՝ ահա եւ ես իմ վերջին օրհնութիւնն եմ տալիս . . . օրհնութիւն՝ որդեակ՝ ցաւած հօր օրհնութիւն։

ԱՂԱՍԻ՝

Վա՛յ իմ սեւ օրիս . . . . . .

ՏԵՍԱՐԱՆ Ը·

ՆՈՅՆՔ՝ ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ ԵՎ ՍՄԲԱՏՈՎ·

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ

Բաւական է՝ որքան տանջուեցան խեղճերը՝ գնանք դուրս

բերե՛նք բանտիցը. Աղասուն չգտանք, որ ինքը գար իր հօրն ազատէր :

ՍՄԲԱՏՈՎ յառաջ գալով եւ տեսնելով.

Ա.հա հեռուումը երևումէ մի տեսարան, կարծեմ Աղասին պէտք է եկած լինի և հօր մօտ է :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ.

Ճշմարիտ է, գնանք տեսնե՛նք ի՞նչ է այն :

ԱՂԱՍԻ տեսնելով նրանց.

Եկէ՛ք, մէլի՛ք և իշխան, եկէ՛ք, զլուխս լացէ՛ք, հինգ տարի նեղութիւն կրելուց յետոյ այս դրութեան մէջ պէտք է գտնեմ իմ ծնողին և իմ սիրելի Մուսային : Հայրս կարողութիւնից զրկուած՝ ձեռք չի մնացել վրան, լեղու չը կայ բերանումը, աչքեր չունի տեսնելու, իսկ իմ քաջ Մուսան, իմ ընտիր նշանդիրը ամբողջ հինգ տարի ինձ հետ չարչարուելուց յետոյ, հիմա աչքերից ել զրկուի : Ո՞վ անչափ տարաբաղդութեան, ի՞նչ մեծ յոյս ունէի, ի՞նչպէս ի զուր դուրս եկաւ :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ.

Մուսա՞ն, ցարութիւնի որդի՞ն, քո ընկերը, հիմա կուրացած բանտումը, ո՞ր քան զարմանք, ով ցաւալի տեսարան :

ՍՄԲԱՏՈՎ.

Ա՜խ, սա այն Մուսա՞ն է, որ պատմումէիր դու Աղասի, քո հոգեկից ընկերը, որ իր կեանքը քեզ համար յետ էր դրել, ափսո՜ս քաջին, դրա քաջագործութիւնքը բոլոր պատմել ես ինձ թիֆլիզումը :

ԱՂԱՍԻ.

Ա.յո՛ իշխան, իմ Մուսան, իմ պատուական Մուսան, Աղասու միակ մխիթարութիւնը, իսկ հիմա միակ վիշտը : Ա՜խ, պատմի՛ր ինձ Մուսա, պատմի՛ր, թէ ո՞վ զրկեց քեզ աչքերից :

ՄՈՒՍԱ.

Աղասի, եթէ աչքեր չունիմ որ ել եսիդ նայելով իմանայի հոգեւոյդ վրդովմունքը, մոտոյ աչքով ես պարզ տեսնում եմ, թէ ի՞նչ շփոթմանց մէջ ես դու, բայց ասեմ քեզ ճշմարիտը

վաթծոն ու կարօն փամբակումը քո արևիդ մատաղ եղան, վանին մեր տասը Քրիստանցի Հայերի հետ գերի ընկաւ, նը-բանցից հինգը իրենց կողից արիւնը բղխելուս քո անուանդ էին օրհնում, քո փափաքը քաշում, հինգն ևս յիսուն զինուորի ա-ռաջից փախստական ընկան Ղարսայ հողը, որ գնան քո տա-բաբաղդութիւնը պատմեն քո սիրելի Անի քաղաքին, որ ու-զում էիր վերականգնես. իսկ քո Մուսան, քո վատաբաղդ Մու-սան քանի Պարսից զինուորի հետ կռուելով ի վերջոյ վառօթը վերջացած՝ Հասան-խանի ճանգն ընկաւ և ճանաչուելով նրանից, իսկոյն աչքերից զրկուեցաւ և իբրև ինախատինս բոլոր Հա-յոց, Երևան ուղարկուեցաւ, բայց Աստուծոյ ողորմութիւնը չը թողեց Հասան-խանի սրտովը լինի։

ԱՂԱՍԻ չարացած.

Ա՜խ Հասան-խան, Հասան-խան, դու իմ ձեռքիցս ազատ-ուեցար, թողէ՛ք, թողէ՛ք ինձ գնալ Զանգուն ընկնիլ. եթէ ես գիտենայի, թէ Երևանն առնուլը փոխանակ ուրախութեան ինձ անփարատ վիշտ պէտք է լինի, ինչի՞ դլուխս մահու տալով պատճառ կը դառնայի։ Ես եմ մեղաւոր, Մուսա, ես եմ քեզ պարտական, Ադասին այսուհետև քո գերին է. ինչի՞ համար ես քեզ չբլսեցի. Հասան-խանին արձակեցի. դու ինձ ասացիր, դա թիւնաւոր օձ է, քանի շուտ ջախջախես դլուխը՝ օգուտ է. ես քեզ պարտական եմ. ո՜հ, ոչ միայն քեզ, այլ և մեր բո-լոր սիրեկան ընկերացը, որոնց յիշատակը անմահ պէտք է մնայ ամէն Հայի սրտում։ Ա՜խ իմ սիրելի ընկերք, դուք լու-սեղէն պսակն առած՝ երկնքումը հրեշտակաց հետ հանգիստ էք, էլ չէք նայում, թէ ձեր տարաբաղդ Աղասին քանի մնայ աշխարհիս երեսին, այնքան պէտք է յուսահատուի ու տանջ-ուի, ո՜հ, ե՞րբ կը լինի, ես էլ մէկ մազ դառնայի ձեր ոտքիցը կպած՝ ձեզ մօտ գայի։

ՄՈՒՍԱ.

Հերիք չէ՞, Աղասի, քեզ էլ ես տանջում, այս խեղճ ծե-ր ունեցոյն էլ, որոյ բերանումն էլ շունչ չէ մնացել և քո ապեր-ջանիկ Մուսային էլ. դու այսուհետև դեռ շատ ուրախ օրեր ունիս անցկացնելու, իսկ քո Մուսայի յանկութիւնը լրացաւ,

իմ փափաքն էր քեզ տեսնելը և հոգիս տալը, թէպէտ աչքեր չունիմ, բայց ահա դիրկս առաջ՝ փափաքս ստացայ և այսուհետև ուրախ կը մեռանիմ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ։

Մուսա իմ որդի, այդ է քո հօր մխիթարանքը։

ԱՂԱՍԻ։

Կոծ ու սուգ, հոգս ու վիշտ, եկէք, Աղասուն պատեցէք, սվ մահ, քո սառը թևերով արի՛ առ իմ հոգիս իմ սիրելի հօր և իմ ցանկալի եղբօր գրկին։ Թող Մուսաս առանց աչքերի խարխափելով գայ գերեզմանիս վերայ թափէ իր մի քանի կաթ արտասունքը և դնայ փոմբակ բաժանէ այն իմ Նաղլուի և երեխայից հետ։ Գնա՛, Մուսա՛, թէև աչք չունիս, բայց քաղցր լեզու ունիս, գնա՛ մխիթարէ Նաղլուին, իմ սիրուն երեխայիցը և քո տարաբաղդ թագուհուն։

ՄՈՒՍԱ։

Չէ՛, Աղասի՛, այսուհետև ինձ կեանքը հարկաւոր չէ, ասա՛ թագուհուն, թող իր սև օրերը ողբայ, ասա՛ Մուսան անունդ յիշելով՝ քեզ բարեբաղդութիւն էր խնդրում։

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ աչքերը սրբելով.

Աղասի՛, հերիք է, վերջ դրէ՛ք այս աղետալի տեսարանին, հանեցէ՛ք այս խեղճ բանտարկելոցը լոյս աշխարհ. քաղցր աղատութիւնը սպասում է սրանց ընդունել իր դիրկը. սրբազան Ներսէս եպիսկոպոսից հրաման ունիմ։

ԱՂԱՍԻ։

Այո՛ Մէլիք, այո՛, սրանք թող ազատութիւն դանեն, իսկ ասա՛ ինձ՝ Հասան-խանն ո՞ւր է, ես պէտք է նրանից վրէժ առնեմ վրէժ, վրէժ հայրենեաց, վրէժ իմ խեղճ ծնողաց և վրէժ իմ աչքիս լոյսի, իմ խաւարեալ Մուսայի։ Մուսա՛, քո եղբայրը չի թողուլ Հասան-խանին. Աղասին մինչև նորա արիւնը չը թափէ, մինչև նորա լերդ ու թոքը դուրս չը քաշէ, մինչև բոլոր Հայոց անմեղ արեանը պատուականին հաղար մասն չանէ, չի հանգստանալ թէև քո աչքերն այդպէս լինելուց յետոյ ինձ ի՞նչ հանգստութիւն։ Այս միայն պէտք է լինի իմ սիրո-

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԸ

Գ· Շ· ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ

1842 թիւ. օգոստոսի 12 Մաղարթու Նախավկայի վանքումը։

ՆՈՐ էր առաւօտեան լուսնումը միմեանցից բաժանուում, երբ դուրս եկի Թաւրէզեցը* : Իմ հետ էին երկու հին ծառայքս, որոց մասին նախընթաց յիշատակարանումս շատ եմ խօսացել: Հէնց անց կացանք Ա.ձի-կէօփրիւ ասուած կամուրջն, որ կէս փարսախից փոքր ինչ աւելի հեռու է Թաւրիզու բերդէն, պատահեցան ինձ հինգ զինուորուած ճիաւոր Պարսիկ ճանապարհորդներ իրանց սպասաւորներովը, սոցա մէջը մի քանիսը դէմքով ինձ ծանօթ էին երևում, վասն որոյ աչքով և գլխով իրարու ողջունեցինք և յետոյ ընդոյց մէջ ձգելով իմացայ, որ նոքա էլ մի և նոյն տեղն էին գնում, ուր և ես, այսինքն գնում էին կառավարութեան կողմից Մասիս լերան տակիցը սկսած մինչև Օրդուպատի մօտքերը Ռուսաց և Պարսից սահմանագլուխները՝ Երասխ գետի ափերքի պահապանների վիճակին վերահասու լինեն, և մանաւանդ էն տեղուանքներին, Պարսից հողի վրայ բնակուած վայրենի Քուրդերի կամ

* Շատերը կարծումեն թէ այսօրուայ Ատրպատականի Թաւրէզ ասուած քաղաքն է մեր հին Դաւրէժ քաղաքը՝ Մեծին Խոսրովից շինուած։ Մեր Դաւրժու նշմարանքը երևում է մինչև այսօր Քուրդիստանու և Ատրպատականի սահմաններումը, Զիլիք ասացեալ, կղզիանման տեղումը, որոյ չուրջն են պատած երկու թաթով և Ջըղաթայի գետերը. այս տեղումը գտնուում է մի քարաժայռ բլուր, որոյ ժայռերի վրայ սեպաձև գրեր են գտնուում մինչև այսօր։

ճանապարհներնիս դէպի Սոփիան, կամ Սոֆեան գիւղն, որ վեց վարսակս հեռի է Թարվիզէն։ Այս գիւղումն հարիւր յիսունաչափ գերդաստանք են բնակվում։ Սոֆեանի արևելեան կողմումն, ճանապարհի մօտ, բլրի տակին, մին խոնարհած և քայքայած մատուռն կար, որ աւանդութեամբ ասին եղած է քրիստոնէից եկեղեցի, ընծայված Սոփեայ անուն կուսի, նորա էն տեղ նահատակվելոյ համար, յորմէ և գիւղն առած է իւր անունը։ Մինչև ցայսօր յաճախ են անպուխտաւորք, թէ Հայք[1], թէ Մահմետականք։

Թարվիզիցն մինչև Սոֆեան հարթ հաւասար դաշտ է, և էն տեղայ Թարվիզն և Թարվիզու Սոֆեանը երևում է ճանապարհորդի աչքումն։

Օգոստոս 13-ին առաւօտեան դուրս եկանք, էս ժամ ճանապարհ գնալուց յետոյ, մտանք մին լայն հովիտ, որոյ մէջէցն անց է կենում Սոֆեանի գետն։ Այս գետն գարնան և աշնան ձնից և անձրևից շատ յորդ է գալիս և փուվում ձորի մէջնուր խոտաւէտ մարգեր են։ Էս տեղանքումն ոչխարներ, նախիրներ և ճանապարհորդայ և կարաւանի երիվարքն, լիութեամբ արածում են։ Շատ լաւ տեսարան է, երբ կարաւանների բեռներն կոյտ կոյտ էս տեղ էն տեղ շարուած պարսպաձև, տէրէրն՝ ոմանք դուրսն էն պարսպիցը՝ շրջում են, ոմանք բեռների շուաքի տակը քնած են, և ոմանք նստած «զայլան չիբուղ» ձեռքներնումն, միմեանց հետ զրոյց են տալիս։ Կրակը միւս կողմումը մխում է, կճուճով կամ սանով կերակուրն վրէն եփվում է, մին էլ տեսնում ես գլխաբաց, շապկով, ոտը բոբիկ, մին փոքր փէտ ձեռքին կրակի առջևն պրպղած քրքրում է, կամ դդալով կերակրի աղի, աւնի ըլնելն է ուզում իմանայ։

Փոքր ինչ բարձրացանք, և ահա Ջաղացներ, բոստաններ, սեխի ձմերուկի սփռուած են—թէ մին փանաբատ[2] տաս, մինչև 30, 40 հատ, որիցն ուզես, կտան։ Որպէս պատմեցին, էս բոստանների բերքն, հէնց ճանապարհորդներն կառնեն կուտեն, էլ ուրիշ տեղ վաճառելոյ չեն տանել։

1 Այս մատուռն ի 1850 ամին նորոգած են Պարսիկներն և քանի մի Սէիդներ են նստում մէջումն անցուդարձ անողներից փող հաւաքում։

2 Տան և հինգ կոպէկ արծաթ։

ռըն, բակլայ, կորեակ, քունջութ, ձմերուկ, սամամ հոտաւէտ սեխ, կանեփ, կերչէք, կտաւատ և առոյտ: Լերանց վերայ որպէս ասացին լիքն են խաւրծիլ, խաշնդեղ, բոխի, ծնեփեկ, սինց, զանազան ծաղիկք, գաղար, կանդառ և այլն:

Երեկոյեան պահ էր ինքաք Շըխալի խան նահանգական կառավարչի տանը, որ մեծ հրապարակի վերայ է շինուած և վերնատունն նայում էր հրապարակին: Շատ պատուով ընդունեց նա մեզ: Փոքր ինչ անցաւ և ահա ներս բերին չայի կարգն ու սարքը. հինգ տէփսի (սինայ) մրգեղէն, գեղձ, խաղող զանազան տեսակ, խնձոր, ձմերուկ, սեխ և սամամ: Սեխն և տեսակ տեսակ խաղողներն ամենաքաղցր էին և համեղ. յորոց միայն թոյ էի կերած: Մին տեսակ խաղող կերանք, որոյ նմանն ոչ մին տեղ չէի տեսած կարմրութեան և մեծութեան կողմանէ: Շըխալի խանն երիտասարդ էր բարձրահասակ և գեղեցիկ տեսլեամբ, ուրախ երեսօք և շատ մարդավարի—իր ասութեամբը ծառայած էր Սամսոն խանի (որ է փախած Ռուս և զօրավար իւրանմանից) Բհադրան ասացեալ գնդումն որպէս հազարապետ կամ գնդապետ, վասն որոյ և հարցրեց ծիծաղելով. գինի, ցքի և ռում ունիմ պատրաստ, որը կամենաք խմել: Թէ՝ յն, որ պատրաստ էր, առաջարկեցի, ի տեղի խմիչքի, թէ մեզ թէյ տան, աւելի շնորհակալ կլինիմք: Թէյից յետոյ առաջարկեց ռումով փունջ, որոյ մոլեալն պարսիկք:

Գիշերիցն երեք ժամ անց էր, Շըխալի խանը հրամայեց ընթրիք բերեն: Ընթրիքն էր երկու տեսակ փլաւ, վրէն կաքաւ, աղաւնիք և կաքաւներ էլ խորոված էին շամբրով-երկու կերպ բօրանի, լաւ մածուն, Մարանդի պատուական մօթալ պանիր և այլ քանի մի տեսակ կերակուրներ եղով և մսով պատրաստած խառուշանուամբ: Բերին երկու տեսակ գինի Մարանդի ոլոց ճաշակն ախորժ էր, յորոց փոքր ինչ խմեցի և գիշերն, ոչինչ գլխացաւութիւն չզգայի, ինչպէս Թարվիզու գինուոյն է խմողն զգում:

Միւս օրն առաւօտեան ժամը չորսին խանի հետ գնացինք տեսնել Նոյ նահապետի կնոջ գերեզմանը, որ տասը բոպէաչափ հեռաւորութեամբ ընկած էր խանի տանից: Բարձրացանք մին քանդած բերդի վրայ, որ էր չորս հարիւր քայլաչափ

միք Ստեփաննոս Նախավկայի վանքն գնալ, մի և նոյնն է Մարականով գնալ, ուր և երկու Եկան անուանեալ գիւղէրն և զ կտեսնենք, կամ թէ Ջուղու Կարանթինի առաջնոցն գնալ, որոյ ճանապարհն աւելի վատ է քան զառաջինն։

Էս առաջին անդամն էր լսելս էն գիւղերի անուններն։ Կային մեզ մօտ նստած քանի մի ծեր մարդիք, որք սկսեցին երկարօրէն աւանդութիւններ պատմել այս երեք գիւղօրէից վրայ, մանաւանդ Մայրականի տաք աղբիւրի և նորա առողջացուցիչ ջրոյ վրայ։

Օգոստոսի 15, առաւօտեան ժամը ինն էր Մարանդից ճանապարհ ընկանք, անցանելով ներքի Եկանի մէջիցն, ուր կացանք ժամաչափ և ոչինչ հնութիւն չտեսայ, միայն մահմեդական բընակչաց գոռոզութիւնն, իբր թէ Նոյայ սերունդիցն ինքած մինչև ցայսօր տիրապետած են այն գիւղն և միշտ Աստուածպաշտութիւնն ձեռքից չեն թողած. և թէ աշխարհքումս էնպէս էին սերունդ ինքած, որպէս իւրեանք չկան, որպէս թէ միւս մարդկային սերունդն ուրիշ մին Նոյայ սերունդէն ինքած լինին։

Մերձ ութն գիւղի մէջիցն և ափնիցն անցկենալով, երեկոյեան պահն էր մին լեառն անց կացանք, որ պէտք էր կամ ճըւաշ լեառն լինէր, ըստ մեր աշխարհագրութեան, կամ նորա գօտին. երեկոյեան հասանք. վերի Եկան գիւղն, որ էր լերան արևմտեան ստորոտի վրայ ընկած, ուր հարիւրաչափ դերգաստանք կային, ամէնքն հեծելազօրք։ Սոքա ոչինչ հարկ չեն տալիս տէրութեանը, որպէս ասացին ի հաղարաւոր ամաց հետէ, վասն որոյ երբ տէրութեանը հարկաւոր լինի, իւրեանց երիվարօքն պէտք է երթան ծառայել ուր և նշանակէ տէրութիւն։ Սորայ ապացուցութիւնն այն էր, որ հետս եկող ձիաւորները հրամանագիր ունէին Ատրպատականի կառավարիչ արքայազն Ղահրաման միրզիցն, որպէս զի հինգ ձիաւոր տան էն տեղիցն նոցա, տանեն ուր որ հարկաւոր համարեն։ Էս հրամանագրէն իմացայ, որ ուղղեկիցների մինն էր երևելի ցեղից, այսինքն, Ահմատ Խան Մարաղեցւոց սերունդէն։ Էս Ահմատ Խանը, անցեալ դարու վերջիցն ցկէսն առաջին քառորդի ներկայ դարուս որպէս Ղաջարաց, այժմեան թագաւորացն Պար-

գիւղի արևելեան կողմումը կից գերեզմանատանը մին բարձր բլուր է ընկած, սրա տակիցը տաք աղբիւր է բղխում որ իբր թէ Նոյայ կնոջ բաղանիքն է։ Բաղանիքի առաջին պարտէզ կայ (որ երբէք չէ ոռոգվում իբր հրաշքով է կանգնած) ուստի, ասեն, ծառ կամ փայտ անգամ կտրողն, իսկոյն անդամալոյծ կլինի։ Գիւղի տնէրն այդեաց մէջ են և զուարճալի տեսարան ունի ի հեռուստ նայելիս։ Գիւղի մօտիկ քարափների վրայ կաքաւ և դրսի էծերը լեռը լինելոյ համար բոլոր Ատրպատականի մէջը էսպիսի որսորդութեան յարմար տեղ չկայ, շատ անգամ թարվեղուց արքայազունք կգան էստեղրանք որսորդութիւն անելոյ։ Էս գիւղի բերքերն են առատ բրինձ, բամբակ, ցորեն և գարի. և ոչխար, ձի, և ուղտ։ Իբր էս տեղայծեռաձեներ որսալիս, մորթումեն, փորիցը մուշկ քար են հանում և շատ թանգ են վաճառում։

Երբ լսեցի թէ էս տեղայ երկու ժամուկէսվան ճանապարհ է մինչև այն տեղն, ուր նահատակվեցան Վարդանանց գունդն, սիրտս չկարողացաւ համբերել չգնալ լսեսնել այն եբանելեաց յիշատակներն, էն յաւերժական դաշտն, ուր մեր նախնեաց արիւններն թափվեցան հայրենեաց սիրոյ համար։

Օգոստ. 17-ին միւս օրն առաւօտեան երկու հեծեալ առի հետս, որպէս թէ որսորդութեան համար եմ գնում, մանկ մին անձուկ ձոր. երկու ժամաչափ գնացինք, և ահա երևեցան Զօրս գիւղի լերինքն։ Դուրս եկինք ձորէն, աչքերնուս առաջին բացվեցաւ մին երկար և լայն դաշտ, որոյ վրայ տասնաչափ գիւղօրայք էին ընկած. և նոցա արևմտեան կողմի լերանց ստորոտի վրայ Զօրս գիւղն։ Ես ոչինչ եղանակաւ չեմ կարող անզօր և տկար գրչով նկարագրել էն տեղրանքն և մանաւանդ սրտիս զգացողութիւնն, երբ նայեցայ այն տխուր դաշտին։ Քառորդ ժամ յառաջ գնացի աչքերս լեռն արտասուք, և յանկարծ զկայ առի, արձանացայ ձիու վրայ, երբ հետիս ձիաւորները մօտեցան ինձ, (մինչ արտասուքս սրբած էի ցոյց չտալու համար նոցա) չգիտեմ ինչ յափշտակեալ զգայութեամբ, սկսաւ արտասուքս կրկնիլ և հեկեկալով լալ նրանց առաջին։ Այնքան և ևթ մտիս է, որ որպէս թէ տեսնում էի աչքերիս առաջին սրբոց Վարդանանց նահատակու-

ճանապարհ է ցնախավկայի վանքն, վասն որոյ շարունակեցինք ճանապարհներնիս քառորդ ժամ, և ահա երևեցան մեզ Մաղարթու սարի դաղաթներն, վասզեցինք շուտ հասնել և զբոսնել և ևս ապահով և հանդարտ օթևան—վանքն: Շամբիցն փոքր ինչ անցած, շուռ եկանք դէպ յաջակողմն, երկու ձորի միջովն կէս ժամաչափ քալելուցն յետոյ, մոտանք վանքի անտառի կամ լաւ ևս ասած այգեաց մէջն, որք ընկած են ձորի աջ ու ահեակ դարի գուսի վրայ առանց պարսպի: Բլուրների վրայ շինուած էին քանի մի տեղ հիւղեր: Մինչև վանքն էս գուարճալի անտառն շարունակվումէ, մէջիցն անց են կենումէ շատ առուներ ականակիտ ջրով լիքն, որոց եթէ կարկաչումն չլինի, խորին լռութիւնը մարդուս սիրտը ահ կը ձգի: Շատ սիրուեած է լինումէ մարդուս սիրտն, երբ էն վայրենի և անմարդաբնակ տեղերէն դուրս գալով, տեսնումէ երկու լեռանց գոտեաց վրայ մին պարիսպ, վանքի դմբեթն ուր և մարդոյ հոտ է զգումէ: Իսկ և իսկ վանքական ծառայքը, լուր տուին վանահօրն, որ քանի մի վանականներով դուրս եկաւ մեզ յառաջաւորել, հետն էին քանի մի մանկտիք, ընծայելք վանացն որոյ կուրծքերի վրայ խաչ էին կարած-սոքա մեր ձիանին բռնեցին մանածելոյ: Ակն յայտնի է վանահայրն չգիտէր մեր ով լինելն, այսու ամենայնիւ իւրեանց սովորական ապգնչականութեան կանոնն էր, որ կատարումէր: Վանահօր հրաւիրմամբ, որոյ հիւրընկալութիւնն ծիծաղումէր երեսին, մտինք մեծ դռնով պարսպի մէջն-մուտն և նեղ անցքերով գնալով, հասանք էն գաւիթն, ուր ուխտաւորք կիջնեն: Ի հարկ է իմ հայերէն խօսալն և անուշս ասելս և ևս քաջալերութիւն տրուին վանահօրն, սկիզբն նայելով այնքան Պարսիկ հեծելազօրաց, անպատճառ կարծումէր եկած ենք նրան վնաս տալոյ և կամ թէ մին հնարք դանելոյ, Ադիդղալ դողին վերարերեալ քննութեանց համար, ստակ խլելոյ: Երբ լսեց, իմ ուխտ գալս և այն հեծեալքն չեն վնասակար մարդիկ, և ևս մարդասիրութեամբ, որպէս երևումէր, ցանկանումէր մեզ ընդունել:

Ուխտաւորաց գաւթումն օթևան տուաւ Պարսիկներին, և ինձ միայն տարաւ ներսի գաւիթն, ուր էր իւր խուցն: Էս գաւիթների միջին արձանացած հին աւուրց թթենիքն, պա-

«Յիշատակ է սուրբ խաչս Յովհաննէս Թագաւորին Հայոց, կողակից Շուշան տիկնուջն. ես որդի Աշոտ Թագաւորի բաղում զօրք եկի ի սուրբ ուխտս, ետու Շամբայ Ջաղացներն Երասխի նաւն և Աստապատու հողն սուրբ Նախավկայ յիշատակ մեզ և ծնողաց, թվին ՆԺԵ. (այսինքն 966 Թ. Փրկչին)։

Խաչին ստորի ծայրն էր ծակ դրոշակի անցուցանելոյ համար. նոյնպէս և փոքր օղ էր կպցրած, որ ինչպէս և վանահայրն ասեց, դրոշակի ձողի վրայ ժապաւինով անցուցանելոյ համար է եղած. և թէ էն ապակեայ խաչն է, որ Յովհաննէս Հայոց Թագաւորն կռիւներումն միշտ հետն մանն կածէր, կամ զօրաց առաջին կտանէին դրոշակի վրայ։

Եկեղեցին, որպէս նայեցի բաւական մեծութեամբ քառակուսի է շինած կոփածոյ քարից երկու սիւների վրայ։ Ունի մէկ սեղան իւր երկու առանդատուններումն, որոց յանդիման է կանանց վերնատունը, բոլորն տաշած քարից և երկու կողմից աստիճաններ ունի նեղ և մութն։ Յոյց տուաւ վանահայրն ձախակողմեան աստիճանի մէջն բարձր պատի վրայ մին քար կըպցրած, որոյ մէջին, ասաց, հաղար սրբոց մասանց աւանդատուն է, ամփոփուած է Յակոբ Զուղայեցի կաթուղիկոսի ժամանակուանից։ Սրա վրայ մին մարմարեայ քար կար, որոյ վերայ գրեալն, վանահայրն օրինակած ունէր, տուաւ ինձ։

ԹՈՒԻՆ ՌՂ.

Հիմնարկութիւն այսմ տաճարի,
Սրբոց հաղարաց նշխարքն յայտնի
Զեռամբ Յակոբ վարդապետի
Որ յետ ինն եակ եռեակ ամի,
Կաթուղիկոսն Հայոց լինի.
Դարձեալ 'ի տեղւոջ ամփոփի
Թվին. ռՃԷ. ամի։

Վերնատան հարաւակողմից փոքրիկ դուռն բացին, ես տեղաց դուրս եկինք զանդակատունն, որոյ գմբէթն 1840 ամի երկրաշարժութենէն խոնարհուած էր և երեք սիւնքն մնացած էին։

Բեմի ճակատն և նրա կամարի կէսն սև և սպիտակ մարմարից էր շինուած։ Հարցրի վանահօրն ուստից է եկած էն

ւանդ նրանք, որք ողջունեղբայր կամ ողջունաքոյր կամենեն լինել։

Վերադարձանք անտի վանքն, ուր պատրաստ էր նախաճաշիկներս, բաղկացած սերից, գոմշի մածնից, կարագից, լաւպաներից, մեղրից, մածնէ սպասից և ամենասպիտակ լաւաշից։

Կէսօրին երեք ժամու կէս անց էր, առաջնորդութեամբ վանահօրն զնացինք աւազանի վրայ շրջելոյ։ Անցանք Ջաղացի մօտովն դէպ ի արևմտեան կողմն, մենաստանիս հանդէպն հասանք աւազանի մօտն, ուր ձգած էին գորգեր և կարպետներ և քանի մի հին աթոռքներ շարած նոցա վրայ։ Ջրի պարզութիւնն էր զարմանալի. չորս կողմի խիտ խիտ ծառերի տակի զանազան ծաղկանց բուրումն և բադերի սագերի ձայնն խառն էն ջրի քչքչալուն, որ աւազանն էր թափվում. շատ ախորժ էր լսելեաց։ Մտքերնումս դրինք էս տեղ ընթրիք անենք, բայց փոքր ինչ անցկացաւ. թէյն երբ խմեցինք վերջացրինք, չոր քամին ցրտի հետ խառն, փոքր փոքր հնպէս ներգործեց մեզ, որ չկարողացանք երկար նստիլ, վերադարձանք մենաստունը։

Բարի վանահօր մարդասիրութեամբ ընդունելուցն, ինձ աւելի ախորժ թուեցաւ նրա խոշորակեաց կերակուր պատրաստել տալն։ Հասարակօրէն Մենաստանաց մէջն, երեկոյեան «Եկեսցէ» աղօթից յետոյ ընթրիք կանեն, բայց երեկն մեր ճանապարհից դալոյ համար հակառակն արին, այսօր որպէս իրանց սովորութիւնն էր էնպէս կերակրեցին մեզ։ Ընթրիքն էր բաղկացած ձկնեղէնից, բանջարեղէնից և թռչուններէի մսից, սպիտակ հացից, մօթալից մածնից և կարագից։ Լաւ ընթրիք անելուց յետոյ, շատ ներում խնդրեց իւրեանց խոշորակեաց կերակուրների համար, ընդհակառակն, որպէս ասացի, ես շատ ուրախ էի էնպիսի ընթրիքէն։

Ընթրիքից յետոյ նստեցանք զրոյց տալ—կից շատ խօսակցութեան, բանի թելն հասաւ Մենաստանիս հնութեան վրայ, որոյ համար ասաց թէ սկզբնաւորութիւնն եղած է ի Թադդէոս և Բարդուղիմէոս առաքելոյ, Աշոտ թագաւորի և Խաչիկ կաթուղիկոսի պարգևագրերի զօրութեամբն և թէ նոցա կոնդակներն կամ հրամանագրերն գրուած։ Նիէ. Հայոց

Սալմաստ, Որմի, Նախիջևան և Ագուլիս, որ տեղաց շատ ուխտաւորներ կը դան ամենայն տարի։ Որպէս ասայ, մինչև Ռուսաց պատերազմն շատ արդիւնք է ունեցած վանքն ուխտաւորներից, բայց հիմի տան և հինգ օր արդելանոցի (կարանթինի) համար շատ նուազել է։ Զորս կողմի Պարսիկներն և ամ կգան ուխտ, մանաւանդ նրանք, որոց երեխայ չէ ծնում։ Մահմետականներն ինքեանք վկայում էին թէ, շատ կան մեր մէջն Դանըղկուլի անուամբ, ըստ որում սրոնք եկած են ուխտ, որդի ծնելուց յետը ծնողքն նրան անուանած են Դանըղկուլի, այսինքն ծառայ Ստեփաննոսի նախավկային, զի նոքա Ստեփաննոս նախավկային Դանըղ փիղէմբէր ասեն, այսինքն մարդարէ։ Վանքական կառավարութիւնն ոչ թէ Հայ, այլև մահմետական ուխտաւորաց կտան հաց և ամանեղէն, որքան հարկաւորի ձիանցն գարի դարման։ Պարսիկք մեր թըխած հայն չեն ուտում, վասն որոյ և նրանց ալիւր կտան։ Որքան ամանեղէն կայ վանքումն, բոլորն էլ պղնձից է, որք ժողոված են որդեծնութեան համար ուխտաւորաց—որդեծնութեան ուխտաւորքն վերադառնալին իւրեանց տունը, մին կամ աւելի կտոր ման կը գողանան, այսինքն ծածուկ հետէրնին կտանեն, թէև տնտեսն իմանայ, որ պակաս է, ոչինչ չի խօսալ։ Գողացած ման տանողն հնգեան ժամանակ կը պահէ, որ մինչև երեխայ ծնանելը—երբ և միևնոյն ծանրութեամբ երկու հատ պէտք է շինել տայ, իւր յիշատակարանը, Հայն հայերէն, Թուրքն պարսկերէն, գրել տայ վրէն, ու ուղարկէ կամ ինքն դալիս բերէ վանքն։ Ի հարկ է շատերն էլ փոխանակ մինի տեղ երկուսն բերելոյ, տասնական են բերել և թերևս աւելի։ Ինձ մարանումը ցոյց տուին հազարաւոր մեծամեծ պղնձէ ամաններ ոսկեզօծ և հասարակ տաւերով յիշատակարաններով, որոց մէջին ամենագովելին էր Աբբաս Միրզայ Շահզատայինը, ժառանգին Ֆաթալի Շահի, և նորա որդւոց Զհանգիր և Խօսրով միրզայիցն։

Որպէս ասային վերջնոցս մայրն, որ զաւակ չէր ծնում, ուխտում է Նախավկային և գալիս վանքն, վերադառնալիս ամաններէրն գողանալ է տալիս տանում։ Քանի մի տարից յետոյ ծնում է Զհանգիր Միրզին, ինքն և իւր ամուսինը այսինքն

Հայից յետոյ, որպէս և երեկն, նստեց վանահայրն զրոյց անելոյ հետս։ Որսորդութեան վրայ խօսք էր բացուած և գովումէր Մաղարթայ լերան կաքաւի որսորդութիւնն։ Մինչ ասելի վաղն միասին գնանք, նա խօսքի թելն կտրեց, թէ լաւ կլինի եթէ կարենանք էն տեղու ճգնաւորին ևս պատահել քարայրից դուրսն և տեսնել գոնէ հեռուանց։ Մինչ հարցրի ինչ ճգնաւոր է, նա պատմեց թէ, քառասուն տարի կայ, որ Մաղարթու սարի վրայ մինը ճգնումէ խոտաճարակ։ Ի հարկ է խոտաճարակ ընելն, ոչ թէ զարմանալի, այլ անհաւատալի թուեցաւ ինձ, ուստի և ես հետաքրքիր եղայ։ Վանահայրն ասեց թէ, ահա մերձ երեսուն տարի է վանքումն եմ, միմիայն երկու կամ երեք անգամեմ պատահած նրան, էն էլ սարէրումն և ոչ թէ վանքումն։ Մարդու չի երևալ, ինչպէս վայրենի կենդանի, թէ հեռուանց մարդ տեսնէ, կփախչի։ Շամբեցի հայէրն կամ շրջակայիս Պարսիկնէրն և Քուրդէրն, նրան կուխանն էսպէս, եթէ խորհուրդնէրնին կատարվի, ճրգնաւորի համար հաց կամ այլևայլ ուտելիք տանեն։ Երբ կատարվի, կտանեն, կդնեն նորա բնակած այրի մօտի չորս կողմի քարէրի վրայ, շատ անգամ եօթն օրից յետոյ կերթան կտեսնեն ինչպէս դրած են էնպէս կայ։ Թռչուններէրն թէ գազաններէրն կդան կուտեն, չդիտեմ։

Ի՞նչ ես ասում, Հայր սուրբ, ասացի վանահօրն, էդ ինչպէս է կարելի, էդ քան տարի հետամուտ չեղաք, ով է ի՞նչ է անունը, ինչի է եկած, ինչովվ է կերակրվում, ձմեռն էն լեռան գլխին ի՞նչպէս է ապրում, նորա հետ ի հարկ է մին մարդ կը լինի, որ հաղորդակցութիւն ունենայ, կամ թէ քրիստոնեա՞ է ինչի՞ ձեր վանքն չէ գալիս աղօթելոյ և այլն և այլն։

Պատասխանեց վանահայրն, ինչ որ հարցնումես, ոչ ինչ մեզ յայտնի չէ, այս քանը կիտենք, որ քառասուն տարի կայ, որ սկիզբն նրան տեսած են մեր սարէրի վրայ։ Հայ լինելոյն, միամիտ եմք, ըստ որում Պօղոս Ծերունի վարդապետն երկու, երեք տարին մին անգամ կերթայ նրա քարայրն, կխոստովանացնէ, կհաղորդէ կդայ, թէ նրա ով լինելն, ուստից գալն և կամ ի՞նչ որ հացնումէք, միայն Պօղոս հայրն պէտք գիտե-

սեց, էսօր մեք հարիսայ ունիմք, թէ ուշանայ համն, կկորցնէ. հարիսայ բառն, ասացի, գիտես հայր, հայրերէն է. ըստ որում երեկոյին կրակի վրայ են դնում և մինչև առաւօտն հարում են շերեփով—հարկանեմ կամ հարեմ բառերին է կրճատած: Վանահայրն ծիծաղելով, ասեց, դէ էդ էր պատճառն որ ձեզ ապրոյին կերակրով եմ ուզում էսօր կշտացնել: Ես շատ կերայ հարիսին. յետոյ տեսնեմ տուին Արաքելին բռնած լաւ կապուտ ձուկն և կաքաւներից լաւ խորովածներ երկու կերպ և կանաչեղէնից թերթև մարսելոյ, քանի մի կերակուրներ:

Հացից յետոյ վանահայրն ինձ թոյլ չտուաւ քնանալոյ, ասաց գնանք դուրս համ կալերին նայենք, համէլ փորք ինչ կշրջենք և ծառերի տակին ուր կ դնես, կարպետ, գորգ բերել կտանք, մին տեղ կնստինք կհանգստանանք: Մին շատ լաւ տեղ, խիտ խիտ ծառերի տակն, փռոցքներ ձգել տուէց, ուր քնեցինք փոքր ինչ վերկացանք, սառը առուի ջրովն երեսներնիս լուացանք, բերին լաւ սեխ, ձմերուկ, ծիրան, շլոր, կարմիր և մեծ խնձոր, ամէնն էլ իւրևանց պարտէզներից:

Պիտի շարունակուի.

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Іюня, 1863 г.